



Համարը N 29-Ն	Տեսակը Ինկորպորացիա
Տիպը Հրաման	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2004.05.03/10(158)	Ընդունման վայրը Երևան
Հոդ. 133	Ընդունման ամսաթիվը 26.03.2004
Ընդունող մարմինը Քաղաքաշինության նախարար	Ստորագրման ամսաթիվը 26.03.2004
Ստորագրող մարմինը Քաղաքաշինության նախարար	Վավերացման ամսաթիվը
Վավերացնող մարմինը	Ուժը կորցնելու ամսաթիվը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 13.05.2004	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ ԸՆԾ ԻՎ-12.03.01-04 «ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության նախարարության կողմից
21 ապրիլի 2004 թ.
Պետական գրանցման թիվ 11704085

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

26 մարտի 2004 թ.
ք. Երևան

N 29-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԸՆԾ ԻՎ-12.03.01-04 «ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10¹ հոդվածի և ՀՀ կառավարության 2003 թ. փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի իրավասությունն վերապահելու մասին» N 156-Ն որոշման համաձայն

Հրամայում եմ՝

- Հաստատել և 2004 թ. հունիսի 10-ից Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դնել ՀԸՆ ԻՎ-12.03.01-04 «Գազաբաշխիչ համակարգեր» շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:
- 2004 թ. հունիսի 10-ից Հայաստանի Հանրապետության տարածքում ուժը կորցրած ճանաչել ՄՆԻՊ 2.04.08-87 «Գազամատակարարում» և ՄՆԻՊ 3.05.02-88 «Գազամատակարարում» շինարարական նորմերը:

Նախարար՝

Ա. Արամյան

ՀԸՆ ԻՎ-12.03.01-04

Հավելված

Հաստատված է
ՀՀ քաղաքաշինության նախարարի
թիվ 29-Ն առ 26 մարտի 2004 թ. հրամանով

**ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ
ԸՃ ԵՆ ԻՎ-12.03.01-04**

Գործարկման թվականը 2004-06-10

1. ԿԻՐԱՄԱՆ ՈՒՈՐՑԸ

Սույն նորմերը տարածվում են նոր, վերակառուցվող և վերականգնվող գազաբաշխիչ համակարգերի նախագծման ու շինարարության վրա, որոնք նախատեսված են սպառողներին բնական և հեղուկացված ածխաջրածնային գազերով ապահովելու համար, ինչպես նաև ներքին գազատարների վրա և սահմանում են պահանջներ նրանց անվտանգության ու շահագործման բնութագրերի նկատմամբ:

2. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

Սույն նորմերի նորմատիվային հղումները բերված են Ա հավելվածում:

3. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն նորմատիվային փաստաթղթում կիրառված տերմիններն ու սահմանումներն են.

Գազաբաշխիչ համակարգ՝ բաղկացած տեխնոլոգիայես, կազմակերպչապես և տնտեսապես փոխկապակցված օբյեկտներից, որոնք կոչված են գազ տեղափոխելու և անմիջապես սպառողներին մատուցելու համար:

Գազաբաշխիչ ցանց՝ արտաքին գազատարների համակարգերի և դրանց վրայի կառուցվածքների ու տեխնիկական կայանքների համակարգ, սկզբնաղբյուրից մինչև ներանցումը սպառողներին:

Գազամատակարարման աղբյուր՝ գազամատակարարման համակարգի տարր (օրինակ գազաբաշխման կայան), ինչը ծառայում է գազը գազաբաշխման ցանց մատակարարելու համար:

Արտաքին գազատար՝ շենքից դուրս, մինչև շենքի արտաքին կոնստրուկցիան անցկացված ստորգետնյա, գետներեսի և (կամ) վերգետնյա գազատար:

Ներքին գազատար՝ շենքի արտաքին կոնստրուկցիայից մինչև շենքի ներսում տեղակայված գազօգտագործող սարքավորման հետ միացման տեղն անցկացված գազատար:

Գազօգտագործող սարքավորում՝ գազը որպես վառելիք օգտագործող սարքավորում:

Գազային սարքավորում՝ որպես գազատարների բաղկացուցիչ տարրեր օգտագործվող, լրիվ գործարանային պատրաստվածության տեխնիկական արտադրանք (կոմպենսատոր, կոնդենսատահավաքիչ, խողովակաշարային փակիչ արմատուր և այլն):

Գազատարի պահպանման գրտի՝ հատուկ պայմաններով օգտագործվող տարածք՝ սահմանված գազատարի ուղեգծի երկայնքով և գազաբաշխիչ ցանցի այլ օբյեկտների շուրջ, որանց շահագործման նորմալ պայմանների ապահովման և վնասվելու հնարավորության բացառման նպատակով:

Նորմերում բերված պայմանական հապավումների ցանկը բերված է Բ հավելվածում:

4. ԳԱԶԱԲԱՇՅԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

4.1 Նոր գազաբաշխիչ համակարգերի նախագծումն ու շինարարությունը, գործող համակարգերի վերակառուցումն ու զարգացումը իրականացվում է համաձայն տվյալ մարզի, քաղաքի, գյուղի գազամատակարարման հաստատված ուրվագծի:

Գոյություն ունեցող բազմաբնակարան շենքերի գազամատակարարման համակարգերի վերականգնումը (վերակառուցումը) իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. դեկտեմբերի 5-ի «Բազմաբնակարան շենքերի գազամատակարարման համակարգերի վերականգնման (վերակառուցման) ժամանակավոր կարգ» N 2024-Ն որոշմամբ:

4.2 Գազաբաշխման համակարգերը պետք է ապահովեն տրվող գազի անհրաժեշտ ծավալը և պահանջվող պարամետրերը:

Գազը որպես վառելիք օգտագործելու առավելության իրավունք ունեցող սպառողների համար, որոնց գազամատակարարումը ենթակա է սահմանափակման կամ դադարեցման, պետք է ապահովվի գազի անխափան մատուցում՝ գազատարների օղակավորման ճանապարհով կամ այլ հիմնավորված եղանակով:

Գազատարների ներքին տրամագծերը պետք է որոշվեն հաշվարկով՝ ելնելով առավելագույն գազօգտագործման ժամերին բոլոր սպառողների գազամատակարարման ապահովման պայմաններից: Բնական գազի որակը պետք է համապատասխանի արդյունաբերական և կոմունալ-կենցաղային նշանակության բնական այրվող գազերի տեխնիկական պայմանների վերաբերյալ ստանդարտին և հեղուկացված ածխաջրածնային գազեր (ՀԱԳ) և ՀԱԳ ավտոմոբիլային տրանսպորտի համար տեխնիկական պայմանների վերաբերյալ ստանդարտներին:

4.3 Ըստ տեղափոխվող գազի բանվորական ճնշման գազատարները բաժանվում են՝ I և II կարգի բարձր ճնշման, միջին ճնշման և ցածր ճնշման՝ 1 աղյուսակի համապատասխան:

Աղյուսակ 1

Գազատարների դասակարգումը ըստ ճնշումների		Տեղափոխվող գազի տեսակը	Վշխատանքային ճնշումը գազատարում ՄՊա
Բարձր	I կարգի	Բնական ՀԱԳ	Բարձր 0.6 մինչև 1.2 ներառյալ Բարձր 0.6 մինչև 1.6 ներառյալ
	II կարգի	Բնական և ՀԱԳ	Բարձր 0.3 մինչև 0.6 ներառյալ
Միջին		Նույնը	Բարձր 0.005 մինչև 0.3 ներառյալ
Ցածր		Նույնը	Մինչև 0.005 ներառյալ

4.4 Գազի ճնշումը ներքին գազատարներում և գազօգտագործող սարքերից առաջ պետք է համապատասխանի այդ սարքերի անխափան աշխատանքն ապահովող արտադրողի տեխնիկական անձնագրերում նշված ճնշմանը, բայց չպետք է գերազանցի 2 աղյուսակում բերված ցուցանիշները:

Աղյուսակ 2

	Գազօգտագործողներ	Գազի ճնշումը ՄՊա
1.	Արտադրական շենքեր, որոնցում գազի ճնշման մեծությունը պայմանավորված է արտադրության պահանջներով	1.2
2.	Այլ արտադրական շենքեր	0.6
3.	Արդյունաբերական կազմակերպությունների առանձին կանգնած կենցաղային շենքերը, կցակառուց արտադրական շենքերին և ներկառուցված այդ շենքերում	0.3
4.	Վարչական շենքեր	0.005
5.	Կաթսայատներ, արտադրական կազմակերպությունների տարածքում առանձնակառուց, երբ գազի ճնշման մեծությունը պայմանավորված է արտադրական պահանջներով	1.2
	նույնը բնակավայրերի տարածքում	0.6
	արտադրական շենքերին կցակառուց, ներկառուցված և տանիքային	0.6
	հասարակական, վարչական և կենցաղային շենքերին կցակառուց, ներկառուցված և տանիքային	0.3
	բնակելի շենքերին կցակառուց, ներկառուցված և տանիքային	0.005
6.	Հասարակական շենքեր (բացի այն շենքերից, որտեղ ՍՆԻՊ 2.08.02 պահանջներով գազային սարքավորումների տեղակայումը չի թույլատրվում) և պահեստներ	0.005
7.	Բնակելի շենքեր	0.003

4.5 Չի թույլատրվում գազատարների ջերմաստիճանային և այլ ձևախախտումներ (այդ թվում նաև տեղափոխություններից), որոնք կարող են բերել դրանց ամբողջականության և հերմետիկության խախտումների:

Գազաբաշխիչ կայանից (այսուհետև՝ ԳԲԿ) դուրս եկող գազատարի համար տեղադրման եղանակի և խողովակների նյութի ընտրությունը հարկավոր է նախատեսել հաշվի առնելով բնահողի փքվածությունը և այլ հիդրոերկրաբանական պայմանները, ինչպես նաև հաշվի առնելով ԳԲԿ դուրս եկող գազի ջերմաստիճանը:

4.6 Գազատարների ամրության հաշվարկը պետք է ընդգրկի խողովակների և միացման մասերի պատերի հաստության որոշումն ու լարվածությունը դրանցում: Ընդ որում ստորգետնյա և գետներեսի պողպատյա գազատարների համար հարկավոր է կիրառել 3 մմ-ից ոչ պակաս պատի հաստությամբ խողովակներ (միացման մասեր), վերգետնյա և ներքին գազատարների համար - ոչ պակաս 2 մմ:

Գազատարների հուսալիության գործակիցներն ըստ պատասխանատվության, բեռնվածքների և ազդեցությունների նորմատիվ և հաշվարկային արժեքներն ու նրանց զուգորդությունները, ինչպես նաև նյութերի բնութագրերի նորմատիվ ու հաշվարկային արժեքները հարկավոր է ընդունել ըստ ՍՆԻՊ 2.01.07 և շինարարական կոնստրուկցիաների և հիմնատակների հուսալիության հաշվարկի ստանդարտի (հիմնական դրույթների):

4.7 Երկրաբանական բարդ պայմաններով և սեյսմիկ ազդեցություններով շրջաններում շինարարության ժամանակ պետք է հաշվի առնվեն համապատասխան շինարարական նորմերի պահանջները և նախատեսվեն գազատարների ամրությունը, կայունությունն ու հերմետիկությունն ապահովող միջոցառումներ:

4.8 Պողպատյա խողովակները պետք է պաշտպանված լինեն կոռոզիայից:

Ստորգետնյա և գետներեսի թմբապատված պողպատե գազատարները, ՀԱԳ ամբարները, գազատարների պողպատե ներդիրներն ու պողպատե պատյանները (այսուհետև՝ գազատարներ) հարկավոր է պաշտպանել հողային և թափառող հոսանքներից առաջացող կոռոզիայից՝ ըստ ստորգետնյա կառուցվածքների կոռոզիայից պաշտպանության ընդհանուր պահանջների վերաբերյալ ստանդարտի:

Ավտոմոբիլային ճանապարհների, երկաթուղային և տրամվայի գծերի տակով ոչ խրամուղային անցնող զազատարների պողպատե պատյանները պետք է պաշտպանված լինեն էլեկտրաքիմիական միջոցներով (այսուհետև՝ ԷՊ), բաց եղանակով տեղադրման դեպքում՝ ԷՊ և մեկուսիչ ծածկույթներով:

Վերգետնյա և ներքին պողպատե խողովակները հարկավոր է պաշտպանել մթնոլորտային կոռոզիայից՝ ըստ ՄՆԻՊ 3.04.03:

4.9 Փազաբաշխիչ համակարգերի կառուցման համար կիրառվող նյութերը, շինվածքները, զազագտագործող և զազային սարքավորումները պետք է համապատասխանեն գործող ստանդարտներին:

4.10 Ստորգետնյա զազատարների համար հարկավոր է կիրառել պոլիէթիլենային և պողպատե խողովակներ, իսկ գետներեսի և վերգետնյա զազատարների համար՝ պողպատե խողովակներ: Ցածր ճնշման ներքին զազատարների համար թույլատրվում է կիրառել պողպատե և պղնձե խողովակներ:

Փազաբաշխիչ համակարգերի համար պողպատե անկար, եռակցված (ուղղակար և պարույրակար) խողովակները և միացման դետալները պետք է պատրաստված լինեն ոչ ավել 0.25% ածխածին, 0.056% ծծումբ և 0.046% ֆոսֆոր պարունակող պողպատից:

Խողովակների նյութի, խողովակային փակիչ արմատուրի, միացման դետալների եռակցման նյութերի, ամրակման տարրերի և այլնի ընտրությունը հարկավոր է կատարել հաշվի առնելով զազի ճնշումը, զազատարի տրամագիծը և պատի հաստությունը, շինարարության շրջանի արտաքին օդի հաշվարկային և շահագործման ժամանակ խողովակի պատի ջերմաստիճանները, բնահողային և բնական պայմանները, թրթռումային բեռնվածքների առկայությունը:

4.11 Անկախ կառուցման շրջանից, 5 մ և ավելի պատի հաստությամբ խողովակի և միացման դետալների մետաղի հարվածային մածուցիկության մեծությունը պետք է լինի ոչ պակաս 30 Ջ/սմ² (զազատարների համար).

ա) ճնշումը բարձր 0.6 ՄՊա, տրամագիծը մեծ 620 մմ,

բ) 6 բալից բարձր սեյսմիկությամբ շրջաններում ստորգետնյա տեղադրվող,

գ) թրթռումային բեռնվածքների ենթարկվող,

դ) հատուկ բնահողային պայմաններում (բացի թույլ փքվածություն, թույլ ուռչող, 1 տեսակի նստվածքային բնահողերից) տեղադրվող ստորգետնյա,

ե) բնական արգելքներ հաղթահարող, ընդհանուր ցանցի երկաթգծերի և 1-III կարգի ավտոմոբիլային ճանապարհների հետ հատվող ստորգետնյա զազատարների:

Ընդ որում խողովակի հիմնական մետաղի հարվածային մածուցիկության մեծությունը որոշվում է շահագործման ամենացածր ջերմաստիճանի դեպքում:

4.12 Փազատար խողովակների եռակցված միացումները, իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով և հերմետիկությամբ պետք է համապատասխանեն եռակցվող խողովակների հիմնական նյութին: Եռակցված միացումների տեսակները, կոնստրուկտիվ տարրերը և եռակցված միացումների չափերը պետք է համապատասխանեն ստանդարտներին:

Ստորգետնյա պողպատե զազատարների համար պետք է օգտագործվեն կցվանքային և անկյունային միացումներ, պոլիէթիլենային խողովակների հետ՝ հիմնականում ներդիր էլեկտրատաքացուցիչ (այսուհետև՝ ՆՏ) դետալներով միացումներ: Առանձին դեպքերում թույլատրվում է կցվանքային միացումներ՝ 100% ֆիզիկական մեթոդներով հսկմամբ:

Կարանները չպետք է ունենան ձաքեր, հլաքնցքեր, չեռայցված խառնարաններ, խողովակների տարառանցքայնություն և եռակցված միացումների մեխանիկական հատկությունները նվազեցնող այլ թերություններ:

Արտաքին զազատարների յուրաքանչյուր եռակցված միացումների մոտ պետք է լինի եռակցողի նշանը (համարը, դրոշմը):

Եռակցված միացումները չի թույլատրվում գետնից պատերի, ծածկերի և շենքերի ու կառուցվածքների կոնստրուկցիաների մեջ:

4.13 Բնական զազի զազատարների վրա տեղադրվող մինչև 80 մմ պայմանական տրամագիծով փակիչ և կարգավորիչ արմատուրի հերմետիկությունը պետք է լինի ոչ ցածր Բ դասից, բարձր 80 մմ՝ ոչ ցածր Գ դասից, իսկ ՀԱԳ հեղուկ ֆազի վրա տեղադրված արմատուրի հերմետիկությունը պետք է լինի ոչ ցածր Ա-Բ դասերից:

4.14 Փազաբաշխիչ համակարգերի շինարարությունը և վերակառուցումը հարկավոր է իրականացնել ըստ հաստատված նախագծի, ինչպես նաև ՄՆԻՊ 3.01.01:

Փազաբաշխիչ համակարգերի նախագծման և շինարարության ժամանակ հարկավոր է նախատեսել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

Փազաբաշխիչ ցանցերի պահպանման գոտիների սահմանները և նրանց սահմաններում գտնվող հողակտորների օգտագործման պայմանները պետք է համապատասխանեն զազաբաշխման ցանցերի պահպանման պահանջներին:

Փազաբաշխման համակարգի աշխատունակությունը և շահագործման անվտանգությունը պետք է ապահովվի և պահպանվի շահագործման փաստաթղթերի համապատասխան անցկացվող տեխնիկական սպասարկման և նորոգման ճանապարհով:

5. ԱՐՏԱՔԻՆ ՉԱԶՍԱՐՆԵՐ

5.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

5.1.1. Արտաքին զազատարների տեղադրումը շենքերի, կառուցվածքների և հարևան զուգահեռ անցնող ինժեներական ցանցերի նկատմամբ անհրաժեշտ է կատարել ըստ ՄՆԻՊ 2.07.01, իսկ արդյունաբերական կազմակերպությունների տարածքներում՝ ըստ ՀՀՇՆ III-9.02.02:

Մինչև 0.6 ՄՊա ճնշմամբ ստորգետնյա զազատարների տեղադրումը սահմանափակ պայմաններում, երբ նորմատիվ փաստաթղթերով կանոնակարգված հեռավորությունները հնարավոր չէ պահպանել, ուղեգծի առանձին հատվածներում, շենքերի միջև և շենքերի կամարների տակ, ինչպես նաև բարձր 0.6 ՄՊա ճնշմամբ զազատարների առանձին կանգնած օժանդակ կառույցներին (առանց մարդկանց մշտական ներկայության շենքերով) մոտեցման դեպքում թույլատրվում է ՄՆԻՊ 2.07.01 և ՀՀՇՆ III-9.02.02 նախատեսված հեռավորության կրճատում մինչև 50%: Ընդ որում մոտեցման տեղամասերում և դրանցից ոչ պակաս 5 մ հեռավորությամբ յուրաքանչյուր կողմից հարկավոր է կիրառել.

ա) գործարանային եռակցվանքների 100% ֆիզիկական մեթոդներով հսկմամբ, պաշտպանիչ պատյանում տեղադրված անկար և էլեկտրաեռակցված պողպատե խողովակներ.

բ) 100% ֆիզիկական մեթոդներով հսկմամբ, պաշտպանիչ պատյաններում տեղադրված, առանց եռակցվանքների կամ ներդիր տաքացուցիչներ (ՆՏ) ունեցող դետալներով միացված պոլիէթիլենային խողովակներ:

ՄՆԻՊ 2.07.01 նախատեսված հեռավորությունների վրա տեղադրված զազատարների դեպքում, բաց ընդհանուր օգտագործման երկաթգծերից ոչ պակաս 50 մ մոտեցումների տեղամասերում և հնգական մետր յուրաքանչյուր կողմի վրա՝ տեղադրման խորությունը պետք է լինի ոչ պակաս 2.0 մ: Եռակցվանքները պետք է անցնեն 100% ֆիզիկական մեթոդներով հսկում:

Ընդ որում պողպատե խողովակների պատերի հաստությունը հաշվարկայինից պետք է ավել լինի 2-3 մմ, իսկ պոլիէթիլենային խողովակները պետք է ունենան ոչ պակաս 2.8 ամրության պաշարի գործակից:

5.1.2 Փազատարների տեղադրումը հարկավոր է կատարել ստորգետնյա կամ գետներեսով: Պոլիէթիլենային խողովակների վերգետնյա տեղադրում չի թույլատրվում:

Հիմնավորված դեպքերում թույլատրվում է պողպատյա զազատարները տեղադրել վերգետնյա, բնակելի թաղամասերում և բակերում շենքերի պատերի վրայով, զազատարի ուղեգծի այլ հատվածներում, այդ թվում՝ արհեստական և բնական խոչընդոտների հատվածներում՝ ստորգետնյա հաղորդակցուղիների հատման դեպքերում:

Վերգետնյա և գետներեսի թմբապատված զազատարները կարող են տեղակայվել ժայռային, ձախձային և այլ բարդ բնահողային պայմաններում: Թմբապատման նյութը և չափերը հարկավոր է ընդունել ելնելով ջերմատեխնիկական հաշվարկից, ինչպես նաև զազատարի և թմբապատման կայունության ապահովումից:

5.1.3 Փազատարների տեղադրումը թունելներում, գետնուղիներում և ջրանցքներում չի թույլատրվում: Բացառություն է կազմում մինչև 0.6 ՄՊա ճնշմամբ պողպատե զազատարների տեղադրումը արդյունաբերական կազմակերպությունների տարածքներում, ըստ ՀՀՇՆ III-9.02.02:

5.1.4 խողովակների միացումները հարկավոր է նախատեսել չկազմատվող: Կազմատվող կարող են լինել պողպատե և պոլիէթիլենային խողովակների փականների միացումները, սարքավորումների և հսկիչ-չափիչ սարքերի (<ՉՍ) տեղադրման մասերը: Բնահողի մեջ պոլիէթիլենային և պողպատե խողովակների կազմատվող միացումներ կարող են նախատեսվել միայն պատյանի և հսկիչ փողակի տեղադրման դեպքում:

5.1.5 Փազատարները գետնից դուրս եկող և մտնող մասերում, ինչպես նաև զազատարի ներանցումը շենք հարկավոր է առնել պատյանի մեջ: Պատի և պատյանի միջև եղած տարածությունը հատվող կոնստրուկցիայի ամբողջ հաստությամբ պետք է լցվափակվի: Պատյանի ծայրերը անհրաժեշտ է խտացնել էլաստիկ նյութով:

5.1.6 Փազատարների ներանցումները շենքեր հարկավոր է նախատեսել անմիջապես այն սենքերում, որտեղ տեղադրված է զազագտագործող

սարքավորում կամ նրան հարակից բաց որմնախորշով միացած սենքում:

Չի թույլատրվում գազատարների ներանցումներ շենքերի նկուղային և կիսանկուղային (ցոկոլային) հարկեր, բացի միաբնակարան և բլոկավորված տներ կատարվող ներանցումները:

5.1.7 Գազատարների վրա անջատիչ սարքերը հարկավոր է տեղադրել՝

- ա) առանձին կանգնած կամ բլոկավորված շենքերից առաջ,
- բ) կանգնակների անջատման համար,
- գ) գազօգտագործող սարքավորումներից առաջ,
- դ) գազականոնավորիչ կետերից առաջ,
- ե) գազականոնավորիչ կայաններից հետո,
- զ) գազատարներից դեպի բնակավայրեր, թաղամասեր, բնակելի շենքերի խմբեր, ինչպես նաև արտադրական կազմակերպություններ և կաթսայատներ գնացող ճյուղավորումների վրա,

է) ջրային արգելքները երկու և ավելի գծերով հատելու դեպքում,
ը) ընդհանուր ցանցի երկաթգծերը և I-II կարգի ավտոմոբիլային ճանապարհները հատելու դեպքում, եթե նախորդ անջատիչ սարքը դրված է տվյալ հատումից 1000 մ և ավել հեռավորության վրա:

5.1.8 Շենքերի պատերի և հենարանների վրայով անցկացված վերգետնյա գազատարների վրա անջատիչ սարքերը հարկավոր է տեղադրել դռներից և բացվող պատուհաններից հետևյալ հեռավորության վրա՝

- ա) ցածր ճնշման գազատարների համար-0.5 մ,
- բ) միջին ճնշման գազատարների համար-1.0 մ,
- գ) II կարգի բարձր ճնշման գազատարների համար-3.0 մ,
- դ) I կարգի բարձր ճնշման գազատարների համար-5.0 մ:

Շենքերի պատերի վրայով տեղադրվող տարանցիկ գազատարների տեղամասերի վրա անջատիչ սարքերի տեղադրում չի թույլատրվում:

5.2. ԱՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶՍԱՐՆԵՐ

5.2.1 Պողպատյա գազատարների ստորգետնյա տեղադրումը հարկավոր է իրականացնել ոչ պակաս 0.8 մ, իսկ պոլիէթիլենայինը ոչ պակաս 1.0 մ խորությամբ, մինչև գազատարի կամ պատյանի վերևը: Այն տեղերում, որտեղ չի նախատեսված տրանսպորտի կամ գյուղատնտեսական մեքենաների շարժում, պողպատե խողովակների տեղադրման խորությունը կարող է լինել ոչ պակաս 0.6 մ:

5.2.2 Գազատարի (պատյանի) և ստորգետնյա ինժեներական հաղորդակցողիների ու կառուցվածքների միջև եղած ուղղահայաց հեռավորությունը (ուսանցային) նրանց հատման տեղերում հարկավոր է ընդունել ոչ պակաս 0.2 մ:

5.2.3 Ստորգետնյա հաղորդակցողային կոլեկտորների, զանազան անցուղիների հետ հատման տեղերում, ինչպես նաև գազային դիտահորերի պատերի միջով անցման տեղերում գազատարը պետք է տեղադրվի պատյանի մեջ:

Պատյանի ծայրերը կառուցվածքների ու հաղորդակցողիների արտաքին պատերի երկու կողմից պետք է դուրս հանվեն առնվազն 2 մ: Գազահորերի պատերի հետ հատման դեպքում՝ ոչ պակաս 2 սմ հեռավորության վրա: Պատյանի ծայրերը հարկավոր է լցափակել ջրամեկուսիչ նյութով: Պատի մի ծայրում, թեթության վերին կետում (բացի դիտահորերի պատերի հատման տեղերից) հարկավոր է նախատեսել պաշտպանիչ սարքվածքի տակ դուրս եկող հսկիչ փողակ:

Պատյանի և գազատարի միջխողովակային տարածքով թույլատրվում է անցկացնել գազաբաշխիչ համակարգի սպասարկման համար նախատեսված, մինչև 60Վ լարման շահագործման մալուխ (կապի, հեռուստամեխանիկայի և էլեկտրապաշտպանության):

5.2.4 Գազատարների շինարարության համար կիրառվող պոլիէթիլենային խողովակները պետք է ունենան ոչ պակաս 2.5-ից ամրության պաշարի գործակից (ԱՊԳ):

Թույլատրվում է պոլիէթիլենային գազատարները տեղադրել՝

- ա) բնակավայրերի տարածքներում՝ մինչև 0.6 ՄՊա ճնշման և 2.8 ԱՊԳ դեպքում
- բ) բնակավայրերից դուրս՝ 1.0 ՄՊա ճնշման և 2.5 ԱՊԳ դեպքում:

Չի թույլատրվում պոլիէթիլենային գազատարների օգտագործումը՝

ա) արոմատիկ և քլորացված ածխաջրածին պարունակող գազերի, ինչպես նաև հեղուկացված ածխաջրածնային գազերի (ՀԱԳ) հեղուկ ֆազի տեղափոխման համար,

բ) երբ գազատարի պատի ջերմաստիճանը շահագործման պայմաններում ցածր է մինուս 15°C:

Ոչ պակաս 2.8 ամրության պաշարի գործակցով պոլիէթիլենային խողովակների կիրառման դեպքում թույլատրվում է 0.3 մինչև 0.6 ՄՊա ճնշմամբ գազատարների տեղադրում առավելագույն մեկ, երկու հարկանի կառուցապատում ունեցող բնակավայրերում: Փոքր գյուղական բնակավայրերում թույլատրվում է տեղադրել մինչև 0.6 ՄՊա ճնշմամբ, ոչ պակաս 2.5 ամրության պաշարի գործակից ունեցող պոլիէթիլենային գազատարներ: Ընդ որում տեղադրման խորությունը պետք է լինի ոչ պակաս 0.8 մ՝ մինչև խողովակի վերնամասը:

5.3 ՎԵՐԳԵՏՆՅԱ ԳԱԶՍԱՐՆԵՐ

5.3.1 Վերգետնյա գազատարները կախված ճնշումից հարկավոր է տեղակայել չայրվող նյութերից պատրաստված հենարանների կամ շենքերի ու կառույցների կոնստրուկցիաների վրայով՝ համապատասխան 3 աղյուսակի:

Ընդ որում շենքերի կոնստրուկցիաներով անցնող գազատարի մեջ ճնշումը չպետք է գերազանցի 2 աղյուսակում համապատասխան սպառողների համար նշված մեծություններից:

Աղյուսակ 3

	Վերգետնյա գազատարների տեղադրումը	Գազի ճնշումը գազատարում ՄՊա, ոչ ավել
1.	Առանձին կանգնած հենարանների, սյուների, էստակադաների ու հարկաշարերի վրա	1.2 (բնական գազի համար), 1.6 (ՀԱԳ համար)
2.	Կաթսայատներ, արտադրական շենքեր Վ, Գ և Դ կարգի սենքերով և ԳԼԿ շենքեր, արտադրական նշանակության հասարակական և կենցաղային շենքեր, ինչպես նաև նրանց ներկառույց, կցակառույց և տանիքային կաթսայատներ՝	
	ա) I և II աստիճանի հրակայուն CO դասի հրդեհավտանգ (ըստ ՀՀՇՆ II 8.04.01)	1.2
	II աստիճանի հրակայուն C1 դասի և III աստիճանի հրակայուն CO դասի շենքերի պատերի և տանիքների վրայով	0.6
	բ) III աստիճանի հրակայուն C1 դասի, IV աստիճանի հրակայուն CO դասի	0.3
	IV աստիճանի հրակայուն C1 և C2 դասերի շենքերի պատերով	0.005
3.	Բնակելի, վարչական, հասարակական և կենցաղային շենքեր, ինչպես նաև նրանց ներկառույց, կցակառույց և տանիքային կաթսայատներ՝ հրակայունության բոլոր աստիճանների	0.005
	Շենքերի արտաքին պատերին ՊԳԿԿ տեղադրման դեպքում (միայն մինչև ՊԳԿԿ)	0.3

5.3.2 Չի թույլատրվում բոլոր ճնշումների գազատարների տարանցիկ տեղադրումը մարդկանց մասսայական ներկայությամբ մանկական հիմնարկների, հիվանդանոցների, դպրոցների, սանատորիաների, հասարակական, վարչական և կենցաղային շենքերի պատերի, տանիքների վրայով: Արգելվում է բոլոր ճնշումների գազատարների տեղադրումը Ա և Բ կարգի սենքերի պատերով, վերնամասով և տակով, բացառությամբ ԳԿԿ շենքերի:

Հիմնավորված դեպքերում թույլատրվում է 100 մմ տրամագծով, միջինից ոչ ավել ճնշմամբ գազատարների տարանցիկ տեղադրումը CO դասի III աստիճանից ոչ պակաս հրակայունության մեկ բնակելի տան պատերով, մինչև տանիքածածկը ոչ պակաս 0.2 մ հեռավորությամբ:

Ցածր և միջին ճնշման գազատարները կարող են տեղադրվել չբացվող լուսամուտների շրջանակների երկայնքով և հատվել արտադրական շենքերի և կաթսայատների ապակեբլոկներով լցված լուսամուտների բացվածքների հետ:

5.3.3 Բարձր ճնշման գազատարները հարկավոր է տեղադրել արտադրական, նրանց հետ բյուրացված վարչական և կենցաղային շենքերի խուլ պատերով կամ դրանց վերին հարկերի լուսամուտների ու դռների որմնախորշերից 0.5 մ բարձրությամբ, տանիքից ցածր 0.2 մ:

5.3.4 Վերգետնյա գազատարների տեղադրման բարձրությունն անհրաժեշտ է ընդունել ըստ ՀՀՇՆ III-9.02.02:

5.3.5 Թույլատրվում է մինչև 0.6 ՄՊա ճնշման անկար կամ էլեկտրաեռակցված, գործարանային եռակցվածքները ֆիզիկական մեթոդներով 100%-ով ստուգում անցած գազատարների տեղադրումը, չայրվող նյութերից կառուցված, հետիոտն և ավտոմոբիլային կամուրջների վրայով:

Գազատարների տեղադրումը հրավտանգ նյութերից կառուցված կամուրջների վրայով՝ արգելվում է:

5.4 ԶՐԱՅԻՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԵՂՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՄ ԳԱԶԱՏԱՐՆԵՐՈՎ

5.4.1 Զրային արգելքների հետ հատվելիս ստորջրյա և վերջրյա գազատարների հեռավորությունը կամուրջներից հորիզոնական դիրքով հարկավոր է պահպանել ըստ 4 աղյուսակի:

Աղյուսակ 4

Զրային արգելքներ	Կամուրջի տեսակը	Գազատարի և կամուրջի հեռավորությունը հորիզոնական դիրքով, ոչ պակաս, մ, գազատարի տեղադրման ժամանակ					
		Կամուրջից վեր				Կամուրջից ցած	
		Վերջրյա գազատարից տրամագծով, մմ		Ստորջրյա գազատարից տրամագծով, մմ		Վերջրյա գազատարից	Ստորջրյա գազատարից
		300 և փոքր	Մեծ 300	300 և փոքր	Մեծ 300	Բոլոր տրամագծերը	
Չնավարկելի սառչող	բազմաթիջք	75	125	75	125	50	50
Չնավարկելի չսառչող	բազմաթիջք	20	20	20	20	20	20
Չնավարկելի՝ ա) ցածր ճնշման գազատարների համար	Մեկ և երկթիջքային	2	2	20	20	2	10
բ) միջին և բարձր ճնշման գազատարների համար		5	5	20	20	5	20

Հեռավորությունները ցույց են տրված կամուրջների դուրս եկած մասերից:

5.4.2 Ստորջրյա անցումներում հարկավոր է կիրառել.

- ա) պողպատե խողովակներ, որոնց պատերի հաստությունը պետք է 2 մ ավել լինի հաշվարկայինից, բայց ոչ պակաս 5 մմ-ից,
- բ) պոլիէթիլենային խողովակներ, որոնք ունեն արտաքին տրամագծի և պատի հաստության հարաբերության ստանդարտ չափ (SDR) ոչ ավել քան 11, իսկ ամրության պաշարի գործակից ոչ պակաս 2.8:

5.4.3 Գազատարի վերջրյա անցման տեղադրման բարձրությունը ջրի բարձրացման հաշվարկային մակարդակից մինչև խողովակի տակը հարկավոր է ընդունել.

- ա) ձորակների կամ հեղեղատների հատման դեպքում ոչ ցածր 0.5 մ բարձր ջրերի հորիզոնից (ԲՏՀ) 5% ապահովվածության դեպքում,
 - բ) ոչ նավարկելի սովորական գետերի հատման դեպքում ոչ պակաս 0.2 մ ԲՏՀ-ից բարձր՝ 2% ապահովվածության դեպքում:
- Փականները անհրաժեշտ է տեղադրել անցման սահմաններից ոչ պակաս 10 մ հեռավորության վրա:

5.5. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ, ՏՐԱՎԱՅԻ ՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ԱԿՏՈՒՌԻԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՏՈՒՄ ԳԱԶԱՏԱՐՆԵՐՈՎ

5.5.1. Ստորգետնյա գազատարների հորիզոնական հեռավորությունը տրամվայի, երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների հատման տեղերից պետք է լինի ոչ պակաս.

- ա) մինչև ընդհանուր օգտագործման երկաթուղիների, տրամվայի ուղիների, I-III կարգի ավտոմոբիլային ճանապարհների վրայի կամուրջները և թունելները, ինչպես նաև նրանց վրայով անցնող հետիոտն, կամուրջները, թունելները՝ 30 մ, իսկ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղիների, IV կարգի ավտոմոբիլային ճանապարհների և խողովակների համար՝ 15 մ,
- բ) մինչև տրամվայի սլաքային փոխադրիչը՝ 4 մ, իսկ մինչև երկաթգծի սլաքային փոխադրիչը՝ 20 մ,
- գ) մինչև կոնտակտային ցանցի հենարանները՝ 3 մ:

Թույլատրվում է նշված հեռավորությունների կրճատում կառուցվածքը շահագործող կազմակերպությունների հետ համաձայնեցնելու դեպքում:

5.5.2 Բոլոր ճնշման ստորգետնյա պողպատե և պոլիէթիլենային գազատարները՝ երկաթուղիների, տրամվայի ուղիների և I-IV կարգի ավտոմոբիլային ճանապարհների ու քաղաքային նշանակության մայրուղիների հետ հատման տեղերում, հարկավոր է անցկացնել պողպատե պատյանների միջով: Պոլիէթիլենային խողովակները պետք է լինեն երկարաչափ, միջին խտության, առանց եռակցված և այլ միացումների: Մնացած դեպքերում պատյանավորման հարցերը լուծվում են նախագծային կազմակերպության կողմից:

Պատյանները պետք է բավարարեն ամրության և երկարակեցության պայմանները:

Պատյանի բարձր ծայրում հարկավոր է տեղադրել պաշտպանիչ սարքի տակ դուրս եկող ստուգիչ փողակ:

5.5.3 Ընդհանուր օգտագործման երկաթուղիների հետ գազատարների հատման տեղերում պատյանների ծայրերը դուրս են բերվում դրանցից ՀՀՇՆ IV-11.05.01 սահմանված հեռավորությունից ոչ պակաս:

Սահմանափակ պայմաններում կառուցվող միջայուղային գազատարների և բնակավայրերում կառուցվող գազատարների դեպքում թույլատրվում է հիշյալ հեռավորության կրճատում մինչև 10 մ, պայմանով, որ պատյանի մի ծայրում տեղադրվի մնուշառման սարքով արտածող փողակ (մոմ), դուրս բերված հողային պաստառի ծայրից 50 մ հեռավորության վրա:

Այլ դեպքերում պատյանների ծայրերը պետք է դուրս բերվեն հետևյալ հեռավորությունների վրա.

- ա) ոչ պակաս 2 մ տրամվայի գծի եզրի ռելիեֆ, ինչպես նաև փողոցի երթևեկելի մասի եզրից,
- բ) ոչ պակաս 3 մ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղու եզրի ռելիեֆ և ճանապարհների ջրահեռացման կառուցվածքի եզրից (կյուվետ, առու), բայց ոչ պակաս 2 մ լիքերի ստորոտից:

5.5.4 Ընդհանուր օգտագործման 1520 մմ ռելամիջի երկաթուղիները գազատարներով հատելիս գազատարի տեղադրման խորությունը պետք է ընդունել ըստ ՀՀՇՆ IV-11.05.01:

Մնացած դեպքերում գազատարի տեղադրման խորությունը ռելի ստորոտի կամ ճանապարհածածկի վերնամասից, իսկ լիքի առկայության դեպքում՝ նրա ստորոտից մինչև պատյանի վերնամասը պետք է բավարարի անվտանգության պահանջներին, բայց ոչ պակաս՝

- ա) մեկ մետրից՝ աշխատանքների բաց կատարման դեպքում,
- բ) 1.5 մ՝ ձգմանցման, կամ թեք ուղղվածության և վահանային հորատանցման եղանակով աշխատանքների կատարման դեպքում,
- գ) 2.5 մ՝ ծակման մեթոդով աշխատանքների կատարման դեպքում:

5.5.5 Պողպատյա գազատարների պատերի հաստությունն ընդհանուր օգտագործման երկաթուղիների հետ հատվելիս պետք է լինի 2-3 մ ավելի հաշվարկայինից, բայց ոչ պակաս, քան 5 մմ՝ պաստառի եզրից յուրաքանչյուր կողմից 50-ական մետր հեռավորության վրա: Այդ տեղամասերում և I-III կարգի ավտոմոբիլային ճանապարհների հատման տեղերում պոլիէթիլենային խողովակների կիրառման դեպքում SDR պետք է լինի ոչ ավելի, քան 11, ամրության պաշարի՝ ոչ պակաս 2.8 գործակցով:

5.6 ՀԱՏՈՒՎ ԲՆԱԿԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԵՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԿԱՆԱՋՆԵՐ

5.6.1 Մեկ միլիոնից ավել բնակչությամբ՝ 6 բալից ավելի սեյսմիկությամբ տեղանքում, ինչպես նաև 100 հազարից ավել բնակչությամբ՝ 7 բալ սեյսմիկությամբ տեղանքում գտնվող բնակավայրերի գազամատակարարումը պետք է նախատեսվի երկու կամ ավել աղբյուրներից (մայրուղային գազաբաշխիչ կայան, ԳԲԿ) բնակավայրի հակադիր մասերում: Ընդ որում բարձր և միջին ճնշման գազատարները պետք է նախագծվեն օղակավորված,

վրականային հարմարանքներով բաժանված սեկցիաների:

5.6.2 Յոթ և ավելի բալ սեյսմիկությամբ շրջաններում գազատարների անցումները գետերի, ձորերի, փորվածքներով անցնող երկաթուղիների վրայով՝ տեղադրելիս պետք է նախատեսվեն վերգետնային: Հենարանների կոնստրուկցիաները պետք է ապահովեն գազատարների՝ երկրաշարժի ժամանակ առաջացող տեղաշարժերի հնարավորությունը:

5.6.3 Սեյսմիկ շրջաններում, ներքնամշակվող և կարստային տարածքներում կառուցվող ստորգետնյա գազատարների այլ ստորգետնյա հաղորդակցուղիների հետ հատման տեղերում, գազատարների 5 տրամագծից փոքր ծածկան շառավիղ ունեցող դարձման անկյուններում, ցանցի ձյուղավորման մասերում, ստորգետնյա տեղադրումից վերգետնյա անցման, պողպատ-պոլիէթիլենային չկազմատվող միացման տեղերում, ինչպես նաև բնակավայրերի սահմաններում գազատարների գծային տեղամասերում 50 մետրը մեկ տեղադրվում են ստուգիչ փողակներ:

5.6.4 Տեղանքի 7 և ավել բալ սեյսմիկության դեպքերում, ներքնամշակվող և կարստային տարածքներում պոլիէթիլենային գազատարների համար պետք է օգտագործվեն զխալվորապես երկարաչափ խողովակներ ոչ պակաս 2.8 ԱՊԳ՝ քաղաքներում և 2.5 ԱՊԳ միջքնակավայրային տեղամասերում ՆՏ միացման դետալներով: Եռակցվանքային միացումները պետք է անցնեն 100% ֆիզիկական մեթոդներով ստուգում:

Պոլիէթիլենային խողովակներով գազատարների տեկտոնական ակտիվ խզումներով տեղամասերի հատումները անհրաժեշտ է կատարել պողպատյա խողովակներով՝ վերգետնյա տեղադրմամբ:

5.7 ՄԱՇՎԱԾ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՊՈՂՊԱՏԵ ԽՈՂՎԱԿՆԵՐԻ ԿԵՐԱԿԱՆՔՆՈՒՄ

5.7.1 Քաղաքային ու գյուղական բնակավայրերի տարածքներում և դրանցից դուրս տեղադրված մաշված ստորգետնյա պողպատե խողովակների վերականգնման (վերակառուցման) համար հարկավոր է կիրառել.

ա) մինչև 0.3 ՄՊա ճնշման դեպքում ներառյալ, գազատարի միջով, ոչ պակաս 2.5 ամրության պաշարի գործակից ունեցող, առանց եռակցված միացումների կամ միացված ՆՏ, կամ բարձրաստիճան ավտոմատացված եռակցման տեխնիկայի օգտագործմամբ եռակցվանքային միացումներով պոլիէթիլենային խողովակների կորզանում (միջածգում),

բ) 0.3-ից 0.6 ՄՊա ճնշման դեպքում ներառյալ սույն կետի ա ենթակետով նախատեսված կարգով, միայն բնակավայրերի տարածքներում ամրության պաշարի ոչ պակաս 2.8 ԱՊԳ, իսկ բնակավայրերից դուրս՝ 2.5 ԱՊԳ,

գ) մինչև 1.2 ՄՊա ճնշման դեպքում՝ գազատարների ներքին մաքրված մակերեսների երեսապատում արհեստական գործվածքով ձկափողով՝ հատուկ երկբաղադրիչ սոսնձով, որի կիրառման տիրույթում է գտնվում տվյալ ճնշումը:

5.7.2 Մաշված գազատարների վերականգնումը կատարում են առանց ճնշման փոփոխության, գործող գազատարի համեմատ բարձրացնելով կամ իջեցնելով ճնշումը:

Ընդ որում թույլատրվում է պահպանել.

ա) վերականգնվող մասերի հատումները ստորգետնյա հաղորդակցուղիների հետ առանց լրացուցիչ պատյանների տեղադրման,

բ) վերականգնվող գազատարների տեղադրման խորությունը,

գ) վերականգնվող գազատարների հեռավորությունը մինչև շենքերը, կառուցվածքները և ինժեներական հաղորդակցուղիները, եթե չի փոխվում վերականգնվող գազատարում ճնշումը, կամ ճնշման մեծացումը մինչև 0.3 ՄՊա:

Մաշված պողպատե գազատարների վերականգնումը՝ ճնշման բարձրացմամբ մինչև բարձր ճնշումը թույլատրվում է, եթե հեռավորությունը մինչև շենքերը, կառուցվածքները և ինժեներական հաղորդակցուղիները համապատասխանում է բարձր ճնշման գազատարներին ներկայացվող պահանջներին:

5.7.3 Պոլիէթիլենային և պողպատե խողովակների չափերի հարաբերությունը խողովակների միջածգման մեթոդով վերակառուցման դեպքում, պետք է ընտրվի՝ ելնելով պոլիէթիլենային խողովակների և դետալների պողպատե խողովակների միջով ազատ անցման հնարավորություններից: Վերակառուցված տեղամասերի ծայրերը՝ պոլիէթիլենային և պողպատե խողովակների միջև պետք է խտացվեն:

6. ԳԱԶԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԿԵՏԵՐ ԵՎ ԿԱՅԱՆՔՆԵՐ

6.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

Գազի ճնշման իջեցման և կարգավորման համար գազաբաշխիչ ցանցերում նախատեսվում են գազակարգավորիչ կետեր (ԳԿԿ) և գազակարգավորիչ տեղակայանքներ (ԳԿՏ): Կարող են կիրառվել գործարանային պատրաստված բլոկային գազակարգավորիչ կետեր (ԲԳԿԿ) կոնտեյներային տիպի շենքերում և պահարանային գազակարգավորիչ կետեր (ՊԳԿԿ):

6.2 ԳԿԿ ԵՎ ԲԳԿԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՐ ՊԱՎԱՆՋՆԵՐԸ

6.2.1 ԳԿԿ անհրաժեշտ է տեղադրել՝

ա) առանձին կանգնած (առանձնակառույց),

բ) կցակառուցված՝ արտադրական շենքերին, կաթսայատներին և արտադրական բնույթի սենքեր ունեցող հասարակական շենքերին,

գ) ներկառուցված՝ գազիֆիկացվող միահարկ արտադրական շենքերում և կաթսայատներում (բացի նկուղային և ցոկոլային հարկերում տեղադրված սենքերից),

դ) ՇՕ դասի I և II աստիճանի հրակայունության արտադրական շենքերի ծածկերի վրա,

ե) շենքերից դուրս՝ արդյունաբերական կազմակերպությունների տարածքներում ցանկապատված, շվաքածածկ բաց հարթակների վրա,

զ) ԲԳԿԿ հարկավոր է տեղադրել առանձին կանգնած (առանձնակառույց):

6.2.2 Բնակավայրերում և առանձին կանգնած (առանձնակառույց) գազակարգավորիչ կետերի հեռավորությունը շենքերից և կառուցվածքներից պետք է լինի ոչ պակաս 5 աղյուսակում բերված չափերից, իսկ արդյունաբերական կազմակերպությունների և արտադրական նշանակության այլ կազմակերպությունների տարածքներում՝ համաձայն ՀՀՇՆ III-9.02.02:

5 աղյուսակում նշված հեռավորությունները հարկավոր է ընդունել ԳԿԿ, ԲԳԿԿ և ՊԳԿԿ շենքերի արտաքին պատերից, իսկ բաց հարթակների վրա տեղակայված սարքավորումների դեպքում՝ ցանկապատից: 5 աղյուսակի պահանջները տարածվում են նաև գազի ծախսի հաշվառման հանգույցների վրա: Մուտքագծում մինչև 0.3 ՄՊա ճնշմամբ առանձին կանգնած ՊԳԿԿ հեռավորությունը շենքերից և կառուցվածքներից՝ չի նորմավորվում:

Աղյուսակ 5

Գազի ճնշումը ԳԿԿ, ԲԳԿԿ, ՊԳԿԿ մուտքագծում ՄՊա	Լուսանցային հեռավորությունը առանձին կանգնած ԳԿԿ, ԲԳԿԿ և ՊԳԿԿ ըստ հորիզոնականի մինչև (մ)			
	Շենքեր և կառուցվածքներ	Երկաթուղային և տրամվայի ուղիներ (մինչև մոտակա ռելսը)	Ավտոմոբիլային ճանապարհներ (մինչև ճամփեզր)	Էլեկտրահաղորդման օդային գծեր
Մինչև 0.6	10	10	5	Ոչ պակաս հենարանի 1.5 բարձրությունից
ավել 0.6 մինչև 1.2	15	15	8	

6.2.3. Առանձնակառույց ԳԿԿ և ԲԳԿԿ պետք է լինեն միահարկ, առանց նկուղի, ըստ հորիզոնական անվտանգության ոչ ցածր ՇՕ դասի II աստիճանի հրակայունությամբ: Թույլատրվում է ԲԳԿԿ-ները տեղակայել կոնտեյներային տիպի շենքերում (չայրվող ջերմապահպանիչով մետաղական հիմնակմախք):

6.2.4. ԳԿԿ կարող են կցակառուցվել ոչ պակաս ՇՕ դասի II աստիճանի հրակայունությամբ, Գ և Դ կարգի սենքեր ունեցող շենքերին:

0.6 ՄՊա բարձր մուտքային ճնշում ունեցող ԳԿԿ կարող են կցակառուցվել այդ նույն շենքերին, եթե նշված ճնշմամբ գազի օգտագործումը պայմանավորված է տեխնոլոգիական անհրաժեշտությամբ:

Կցակառուցվածքները պետք է հարեն այդ շենքերին հակահրդեհային խուլ պատերի կողմից, իսկ հարման մակերեսը լինի գազամթափանց:

Հեռավորությունը կցակառուցվող ԳԿԿ պատերից և ծածկից մինչև պատի մեջ ամենամոտ բացվածքը պետք է լինի ոչ պակաս 3 մ:

6.2.5. Ներկառուցված ԳԿԿ թույլատրվում է կառուցել գազի ոչ ավել 0.6 ՄՊա մուտքային ճնշման դեպքում, ոչ ցածր II աստիճանի հրակայունության ՇՕ դասի Գ և Դ կարգի սենքեր ունեցող շենքերում: Ներկառուցված ԳԿԿ սենքը պետք է ունենա հակահրդեհային գազամթափանց պատող կոնստրուկցիաներ և շենքերից դուրս գալու ինքնուրույն ելք:

6.2.6. ԳԿԿ և ԲԳԿԿ սենթերն անջատող պատերը պետք է լինեն հակահրդեհային I տիպի՝ ըստ ՀՀՇՆ II-8.04.01 և գազաանթափանց: Շինելույզների և օդափոխիչ խողովակների տեղադրումը սենթերն անջատող պատերում, ինչպես նաև շենթերի այն պատերում, որոնց կցակառուցվում են ԳԿԿ (նրանց համար սահմաններում) չի թույլատրվում:

Օժանդակ սենթերը պետք է ունենան շենթից դուրս տանող տեխնոլոգիական սենթերի հետ առնչություն չունեցող ինքնուրույն ելք: ԳԿԿ և ԲԳԿԿ դռները պետք է լինեն հակահրդեհային և բացվեն դեպի դուրս:

6.2.7. Սենթերը, որոնցում տեղադրված են ճնշման կարգավորիչ հանգույցները պետք է բավարարեն ՍՆԻՊ 2.09.02 և ՀՀՇՆ II-8.04.01 պահանջներին:

6.3. ՊԳԿԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

6.3.1. ՊԳԿԿ տեղադրվում են առանձին հենարանների վրա կամ այն շենթերի արտաքին պատերին, որոնց գազամատակարարման համար դրանք կոչված են:

Հեռավորությունները առանձին կանգնած ՊԳԿԿ մինչև շենթեր և կառուցվածքներ պետք է լինեն 5 պակաս 5 աղյուսակում նշվածներից: Ընդ որում մուտքում մինչև 0.3 ՄՊա ճնշում ունեցող ՊԳԿԿ հեռավորությունները շենթերից և կառուցվածքներից չի սահմանափակվում:

6.3.2. Մուտքում մինչև 0.3 ՄՊա գազի ճնշում ունեցող ՊԳԿԿ տեղադրվում են՝
ա) բնակելի, հասարակական, վարչական և կենցաղային շենթերի արտաքին պատերի վրա անկախ դրանց հրակայունության աստիճանից և հրդեհավտանգավորության դասից՝ մինչև 50 խմ/ժ գազի ծախսի դեպքում:

բ) բնակելի, հասարակական, վարչական և կենցաղային շենթերի արտաքին պատերի վրա ոչ ցածր III աստիճանի հրակայունության C1 դասի դեպքում՝ մինչև 400խմ/ժ գազի ծախսի դեպքում:

6.3.3. Մուտքում 0.6 ՄՊա ճնշում ունեցող ՊԳԿԿ տեղադրվում են կաթսայատների, արտադրական, հասարակական և արտադրական նշանակության կենցաղային շենթերի արտաքին պատերի վրա, ինչպես նաև ոչ ցածր CO դասի III կարգի հրակայունության գործող ԳԿԿ արտաքին պատերի վրա:

6.3.4. Մուտքում 0.6-ից մինչև 1.2 ՄՊա ճնշում ունեցող ՊԳԿԿ տեղադրումը շենթերի արտաքին պատերի վրա չի թույլատրվում:

6.3.5. Մուտքում մինչև 0.3 ՄՊա ճնշում ունեցող, շենթերի արտաքին պատերի վրա տեղադրվող ՊԳԿԿ պատից մինչև լուսամուտների, դռների և այլ բացվածքները եղած հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 1մ, իսկ 0.3-ից մինչև 0.6 ՄՊա դեպքում՝ ոչ պակաս 3 մ:

6.3.6. Թույլատրվում է ՊԳԿԿ տեղադրումը I և II աստիճանի հրակայունությանը CO դասի արտադրական շենթերի չայրվող ջերմապաշտպանիչով ծածկերի վրա, դեպի ծածկ տանող ելքի կողմից, ելքից ոչ պակաս 5 մ հեռավորության վրա:

6.4. ԳԱԶԱՎՈՐՈՒՄ ԿԱՅԱՆՔՆԵՐԻՆ (ԳԿ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

6.4.1. ԳԿ կարող են տեղադրվել զազօգտագործող սարքավորումների հետ համատեղ, նույն սենթում, ինչպես նաև անմիջապես ջերմային ազդեցությունների մոտ՝ դրանց այրիչներին գազ մատակարարելու համար:

Թույլատրվում է մեկ ԳԿ գազ մատակարարել նույն շենթի այլ սենթերում տեղադրված ջերմային ազդեցություններին, պայմանով, որ դրանք աշխատեն գազի ճնշման նույնանման ռեժիմներում և այն սենթերում, որտեղ ապահովված է գազասարքավորումների անվտանգ աշխատանքն ապահովող շահագործող անձնակազմի շուրջօրյա մուտքը:

6.4.2. ԳԿ քանակը մեկ սենթում չի սահմանափակվում: Ընդ որում յուրաքանչյուր ԳԿ չպետք է ունենա երկուսից ավել կարգավորման գիծ:

6.4.3. ԳԿ կարող են տեղակայվել ոչ ավել 0.6 ՄՊա մուտքային ճնշման դեպքում:

Ընդ որում ԳԿ տեղաբաշխվում են՝ Գ և Դ կարգի այն սենթերում, որտեղ

ա) տեղադրված են գազօգտագործող սարքավորումներ կամ բաց բացվածքներով նրանց միացած նույն կարգի կից սենթերում, որտեղ գործում է արտադրության համար անհրաժեշտ օդափոխության համակարգը,

բ) Կ1-Կ4 կարգի սենթերում, եթե նրանցում տեղակայված գազօգտագործող սարքավորումները հավաքակցված են արտադրության

տեխնոլոգիական ազդեցությունների մեջ:

6.4.4. Ա և Բ կարգի սենթերում ԳԿ-ներ տեղադրել չի թույլատրվում:

6.5. ԳԿԿ, ԲԳԿԿ, ՊԳԿԿ ԵՎ ԳԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

6.5.1. ԳԿԿ, ԲԳԿԿ, ՊԳԿԿ և ԳԿ պետք է սարքավորված լինեն գտիչով, ապահովիչ փակման կափույրով (ԱՓԿ), գազի ճնշման կարգավորիչով, ապահովիչ արտանետիչ կափույրով (ԱԱԿ), փակման արմատուրով, հսկիչ չափիչ սարքերով (ՀՁՍ) անհրաժեշտության դեպքում ծախսահաշվիչ հանգույցով, ինչպես նաև շրջանցիկ գազատարով (բայապաս)՝ երկու հաջորդաբար տեղադրված անջատիչ սարքերով:

Մեկ բնակարանով տան գազամատակարարման համար նախատեսված ՊԳԿԿ թույլատրվում է առանց շրջանցիկ գազատարի:

ԳԿԿ կամ ԳԿ մուտքային 0.6 ՄՊա բարձր ճնշման և գազի ավելի, քան 5000 խմ/ժ ծախսի, իսկ ՊԳԿԿ ավելի, քան 100 խմ/ժ ծախսի դեպքում, շրջանցիկ գազատարի փոխարեն պետք է սարքավորվեն երկու ճնշման կարգավորման գծերով:

6.5.2. Փակիչ արմատուրի, սարքերի և սարքավորումների մի մասի ԳԿԿ, ԲԳԿԿ շենթերից կամ ՊԳԿԿ պահարանից դուրս տեղադրման դեպքում պետք է ապահովված լինեն դրանք արտադրող գործարանների անձնագրերում նշված շահագործման պայմանները:

ԳԿԿ, ԲԳԿԿ և ՊԳԿԿ պահարանի սահմաններից դուրս տեղադրված սարքավորումները պետք է լինեն ցանկապատված:

6.5.3. ԳԿԿ, ԲԳԿԿ, ՊԳ ԿԿ և ԳԿ տեղադրված գտիչները պետք է ունենան ճնշման անկումը որոշող հարմարանք, որով բնութագրվում է գտիչ պարկուճի կեղտոտվածության աստիճանը՝ գազի առավելագույն ծախսի դեպքում:

6.5.4. Գազօգտագործող և գազային սարքավորումների անվտանգ ու կանոնավոր աշխատանքի համար գազատարում գազի ճնշման անթույլատրելի փոփոխության դեպքում ԱՓԿ և ԱԱԿ պետք է ապահովեն համապատասխանաբար՝ գազամատակարարման ավտոմատ դադարեցումը կամ գազի արտանետումը մթնոլորտ:

6.5.5. ԳԿԿ, ԲԳԿԿ, ՊԳԿԿ և ԳԿ հարկավոր է նախատեսել արտափչման և արտանետման խողովակաշարերի համակարգ գազատարների փչամաքման և ԱԱԿ գազի արտանետման համար, որոնք դուրս են բերվում այնպիսի տեղերում, որտեղ ապահովվում է գազի անվտանգ ցրման պայմանները:

6.5.6. ԳԿԿ, ԲԳԿԿ, ՊԳԿԿ և ԳԿ հարկավոր է տեղադրել կամ ներառել գազամատակարարման տեխնոլոգիական գործընթացների հեռադեղնավարման ավտոմատ համակարգերի (ԳՏԳ ՀԱՀ) կազմում գազի մուտքի և ելքի ճնշումների, ինչպես նաև ջերմաստիճանի ցուցիչ և գրանցող սարքեր:

ՊԳԿԿ կարող են կիրառվել չարժական սարքեր:

6.5.7 ԳԿԿ և ԲԳԿԿ սենթերի պայթյունավտանգ գոտիներում տեղակայվող հսկիչ-չափիչ սարքերը, որոնք ունեն ելքային էլեկտրական ազդանշաններ և էլեկտրասարքավորումներ, հարկավոր է նախատեսել պայթյունապաշտպանված կատարմամբ:

էլեկտրական ելքային ազդանշանով ՀՁՍ պետք է տեղակայվեն արտաքինից, պայթյունավտանգ գոտուց դուրս, չայրվող նյութերից պաշտպանված փակվող պահարանում կամ կցակառուցված ԳԿԿ և ԲԳԿԿ հակահրդեհային գազաանթափանց պատին (սպման սահմաններում):

Իմպուլսային գազատարների մուտքը այդ սենթ՝ սարքերին գազի ճնշման իմպուլս հաղորդելու համար հարկավոր է իրականացնել այնպես, որ բացառվի գազի թափանցումը ՀՁՍ սենթ:

6.5.8. ԳԿԿ և ԲԳԿԿ էլեկտրասարքավորումները պետք է համապատասխանեն ԷՍԿ պահանջներին:

Հնուսախոթան տեսակետից բնակավայրերի ԳԿԿ և ԲԳԿԿ էլեկտրամատակարարումը հարկավոր է դասել 3-րդ կարգին, իսկ արդյունաբերական կազմակերպությունների ԳԿԿ և ԲԳԿԿ՝ հիմնական արտադրությունը: ԳԿԿ և ԲԳԿԿ շանթապաշտպանվածությունը պետք է համապատասխանի II կարգի շանթապաշտպանվածությամբ օբյեկտներին:

7. ՆԵՐՔԻՆ ԳԱԶՍԱՐՆԵՐ

7.1 Գազօգտագործող սարքավորումների տեղաբաշխման հնարավորությունը տարբեր նշանակության շենթերի սենթերում և պահանջները այդ սենթերի նկատմամբ՝ սահմանվում են դրանց նախագծման և կառուցման համապատասխան շինարարական նորմերով, հաշվի առնելով այդ սարքավորումների վերաբերյալ գործող ստանդարտների, դրանց կիրառման գործարանային անձնագրերի և հրահանգների պահանջները:

Արժեքվում է գազօգտագործող սարքավորումների (բնական գազի և ՀԱԳ) տեղակայումը շենթերի նկուղային և գետնահատակային (ցուկլային) սենթերում (բացի միաբնակարան և բլոկացված բնակելի շենթերից), եթե տեղակայման նման հնարավորությունը չի սահմանված համապատասխան շինարարական նորմերով:

7.2 Բոլոր նշանակության շենքերի սենքերը (բացի բնակելի բնակարաններից), որտեղ տեղադրվում են ավտոմատացված՝ շահագործող անձնակազմի մշտական ներկայությունը չպահանջող գազօգտագործող սարքավորումներ, հարկավոր է սարքավորել գազօտվածության հսկողության համակարգերով, գազամատակարարման ավտոմատ անջատմամբ և գազօտվածության ազդանշանի դուրս բերմամբ դեպի կարգավարական կետ կամ սենք, որտեղ կա սպասարկող անձնակազմի մշտական ներկայություն:

Բնակելի շենքերում անկախ գազօգտագործող սարքավորումների տեղադրման տեղից, հարկավոր է նախատեսել գազօտվածության հսկողության համակարգ՝ գազամատակարարման ավտոմատ անջատմամբ՝ վթարային անջատիչ կափույր միացված այրվող գազերի ազդանշանային սարքին:

(7.2-րդ կետը խմբ. 11.01.08 N 04-Ն)

7.3 Ներքին գազատարները հարկավոր է կատարել մետաղական խողովակներից, ինչպես նաև ծալքավոր մետաղական ձկախողովակներից: Կենցաղային գազային սարքավորումները, ՀՉՍ, ՀԱԳ տարողությունները, տեղափոխվող և շարժական գազօգտագործող սարքավորումները գազատարներին միացնելիս թույլատրվում է նախատեսել տեղափոխվող գազի ճնշման և ջերմաստիճանի նկատմամբ կայուն ձկափող:

Մետաղական ծալքավոր ձկախողովակների և կցամասերի անվտանգության պահանջները պետք է համապատասխանի ՀՍ ԻՍՕ 10380 և ՀՍ ԻՍՕ 10806 միջազգային ստանդարտների պահանջներին:

(7.3-րդ կետը լրաց. 30.11.05 N 224-Ն, փոփ. 22.12.06 N 302-Ն)

7.4 խողովակների միացումները պետք է լինեն չկազմատվող: Կազմատվող միացումներ թույլատրվում է նախատեսել գազային և գազօգտագործող սարքավորումների և ՀՉՍ միացման տեղերում, ինչպես նաև մետաղական ծալքավոր ձկախողովակների օգտագործման դեպքում՝ գազատարերի ձյուղավորման և ծալքասարքավորումների միացման տեղերում:

(7.4-րդ կետը լրաց. 30.11.05 N 224-Ն)

7.5 Գազատարի տեղադրումը հարկավոր է նախատեսել բաց կամ թաքնված: Թաքնված տեղադրման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ կոռոզիայից պաշտպանելու համար և ստեղծել հնարավորություն դրանց զննման ու պաշտպանիչ ծածկույթի նորոգման համար:

Շենքերի կոնստրուկցիաների հետ հատման մասերում գազատարները հարկավոր է տեղադրել պատյանի մեջ:

ՀԱԳ գազատարների թաքնված տեղադրում չի թույլատրվում:

7.6 Գազատարների տարանցիկ տեղադրումը նոր կառուցվող բնակելի շենքերում անհրաժեշտ է նախատեսել ոչ բնակելի սենքերով:

Անհրաժեշտության դեպքում կարելի է իրականացնել գազատարների տարանցիկ բաց տեղադրում, այդ թվում՝ գոյություն ունեցող և վերականգնվող բնակելի սենքերում, հասարակական նշանակության սենքերում և բոլոր նշանակության շենքերի արտադրական սենքերում, հաշվի առնելով աղյուսակ 2 պահանջները ճնշման նկատմամբ, եթե գազատարների վրա չկան կազմատվող միացումներ և ապահովված է նրանց զննման հնարավորությունը:

7.7 Արտադրական շենքերի, կաթսայատների, հասարակական և կենցաղային նշանակության արտադրական շենքերի գազատարների վրա հարկավոր է նախատեսել փչանմաքման խողովակներ:

7.8 Չի թույլատրվում գազատարների տեղադրումը՝ Ա և Բ կարգի պայթյունավտանգ և պայթյունահրդեհավտանգ սենքերում, բոլոր սենքերի պայթյունավտանգ գոտիներում, նկուղներում, պայթյունավտանգ և այրվող նյութերի պահեստային շենքերում, էլեկտրաէներգակայանների և բաժանարար սարքավորումների սենքերում, օդափոխման անցուղիներով, խցերով և հորաններով, վերելակների հորաններով և սանդղականոցակներով, աղբահավաքման սենքերով, ծխնելույզներով, այնպիսի սենքերով, որտեղ գազատարը կարող է ենթարկվել կոռոզիայի, ինչպես նաև աղբահավաքման նյութերի հնարավոր ազդեցության տեղերով և այնպիսի տեղերով, որտեղ գազատարը կարող է ողողվել այրման թեժ արգասիքներով կամ շփվել շատ տաքացրած կամ հալված մետաղի հետ:

Գոյություն ունեցող բազմաբնակարան շենքերի գազամատակարարումը վերականգնելիս գազականգնակների տեղակայումը սանդղականոցակներում թույլատրվում է իրականացնել համաձայն ՀՀՇՆ 11-8.04.01 6.32 կետի:

7.9 Անջատիչ սարքեր անհրաժեշտ է նախատեսել՝

- ա) գազահաշվիչներից առաջ (եթե չի կարելի օգտագործել մուտքագծի վրա տեղադրված անջատիչ սարքը).
- բ) կենցաղային գազասարքերից, գազասալիկներից, ջեռուցման վառարաններից, գազասարքավորումներից և հսկիչ-չափիչ սարքերից առաջ.
- գ) գազօգտագործող սարքավորումների այրիչներից և բռնկիչներից առաջ.
- դ) փչանմաքման խողովակների վրա.
- ե) այն սենքի ներանցման գազատարի վրա, որտեղ տեղակայված է գազակարգավորիչ կայանք (ԳԿ) կամ գազահաշվիչ՝ ներանցման տեղից 10 մ-ից ավել հեռավորության վրա տեղադրված անջատիչ հարմարանքով:

Գազատարների թաքնված և տարանցիկ տեղամասերի վրա անջատիչ սարքերի տեղադրումն արգելվում է:

7.10. Յուրաքանչյուր օբյեկտ, որտեղ տեղադրվում է գազօգտագործող սարքավորում պետք է սարքավորված լինի գազի ծախսի հաշվիչով՝ ըստ «Բնական գազի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոնների» (հաստատված 29.05.2001 թ. ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի N 24 որոշմամբ):

8. ՀՆՈՒԿԱՅՎԱԾ ԱԾՍԱԶՐԱԾՏԱՅԻՆ ԳԱՋԵՐԻ ԳԱԶԱՄԱՐՈՒՅԻՆ ԵՎ ԲԱՆՈՆԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

8.1 Գազամբարային կայանքներ

8.1.1 Սույն ենթաբաժնի պահանջները տարածվում են բնակելի, վարչական, հասարակական, արտադրական և կենցաղային շենքերի համար որպես գազամատակարարման աղբյուր ծառայող ՀԱԳ գազամբարային կայանքների վրա:

Գազամբարային կայանքներից սպառողներին գազ տեղափոխող գազաբաշխիչ ցանցերը պետք է համապատասխանեն սույն շինարարական նորմերի պահանջներին:

8.1.2 Գազամբարային կայանքի կազմում հարկավոր է նախատեսել՝ գործարանային պատրաստվածության գազի ճնշման կարգավորիչներ, ապահովիչ-փակիչ և ապահովիչ-արտանետիչ կափույրներ (ԱՓԿ և ԱԱԿ), հսկիչ չափիչ սարքեր (ՀՉՍ) գազամբարներում ճնշումը և մակարդակը հսկելու համար, փակիչ արմատուր, ամբարներ, ինչպես նաև հեղուկ և գոլորչային ֆազերի խողովակաշարեր:

Տեխնիկական անհրաժեշտության դեպքում գազամբարային կայանքի կազմում նախատեսվում է գործարանային պատրաստվածության ՀԱԳ գոլորչիցման կայանքներ:

8.1.3 Գազամբարների բանակը կայանքում պետք է լինի ոչ պակաս երկուսից: Թույլատրվում է նախատեսել մեկ գազամբարի տեղադրում, եթե գազօգտագործման ռեժիմի տեխնոլոգիայի և առանձնահատկության պայմաններով թույլատրվում է ընդմիջումներ:

Երկուսից ավել բանակի գազամբարների դեպքում կայանքը պետք է բաժանվի խմբերի, ընդ որում՝ յուրաքանչյուր խմբի գազամբարները հարկավոր է իրար միացնել հեղուկ և գոլորչի ֆազերի խողովակաշարերով, որոնց վրա անհրաժեշտ է նախատեսել փակիչ սարքերի տեղադրում:

Առանձին խմբերի գազամբարների միասնական աշխատանքի համար հարկավոր է դրանք իրար միացնել գոլորչային ֆազի խողովակաշարերով, որոնց վրա անհրաժեշտ է նախատեսել անջատիչ սարքեր:

8.1.4 Գազամբարային կայանքի ընդհանուր տարողությունը և մեկ գազամբարի տարողությունը հարկավոր է ընդունել 6 աղյուսակում նշվածից ոչ ավել:

Աղյուսակ 6

Գազային կայանքի նշանակությունը	Գազամբարային կայանքի ընդհանուր տարողությունը, խմ		Մեկ գազամբարի առավելագույն տարողությունը, խմ	
	Վերոգետնյա	Ստորոգետնյա	Վերոգետնյա	Ստորոգետնյա
Բնակելի, վարչական և հասարակական շենքերի գազամատակարարում	5	300	5	50
Արտադրական շենքերի, արդյունաբերական կազմակերպությունների, կենցաղային շենքերի և կաթսայատների գազամատակարարում	20	300	10	10

8.1.5 Ստորոգետնյա գազամբարները անհրաժեշտ է տեղակայել բնահողի սեզոնային սառչումների դեպքում հողի մակերեսից մինչև գազատարի

վերին ծնիչը 0.6 մ ոչ պակաս խորությամբ և 0.2 մ՝ առանց բնահողի սառչումի շրջաններում:

Փազամբարների տեղադրման ժամանակ հարկավոր է նախատեսել դրանց կայունությունն ապահովող միջոցառումներ:

8.1.6 Ստորգետնյա գազամբարների միջև լուսանցային հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 1 մ, իսկ վերգետնյա գազամբարների միջև՝ հավասար հարակից մեծ գազամբարի տրամագծին, բայց ոչ պակաս 1 մ:

Մինչև 50 խմ ընդհանուր տարողությամբ գազամբարների հեռավորությունը հաշված եզրային գազամբարից մինչև տարբեր նշանակության շենքերը, կառուցվածքները և հաղորդակցուղիները հարկավոր է ընդունել ոչ պակաս 7 աղյուսակում նշվածից:

Հեռավորությունը գազատարներից ընդունվում է համապատասխան ՍՆԻՊ-2.07.01 և ՀՀՇՆ III - 9.02.02:

Բարձր 50 խմ ընդհանուր տարողություն ունեցող գազամբարների հեռավորությունները ընդունվում են ըստ 9 աղյուսակի:

Փոյություն ունեցող օբյեկտների վերակառուցման դեպքում, ինչպես նաև սահմանափակ պայմաններում (նոր նախագծման ժամանակ),

համապատասխան հիմնավորման և շահագործման անվտանգությունն ապահովող միջոցառումների իրականացման դեպքում թույլատրվում է 7 աղյուսակում նշված հեռավորությունները փոքրացնել մինչև 50 % (բացառությամբ հեռավորությունները ջրատարներից և այլ անկանալ հաղորդակցուղիներից, ինչպես նաև ընդհանուր ցանցի երկաթուղիներից): 7 աղյուսակում նշված հեռավորությունները բալունային և գոլորշիացման կայանքներից ընդունվել են IV աստիճանի հրակայունության բնակելի և արտադրական շենքերի համար: III աստիճանի հրակայունության շենքերի համար թույլատրվում է դրանք պակասեցնել մինչև 10 մ, իսկ I և II աստիճանի հրակայունության շենքերի համար՝ մինչև 8 մ:

Հեռավորությունը մինչև այն բնակելի շենքերը, որտեղ տեղավորված են հասարակական նշանակության կազմակերպություններ, հարկավոր է ընդունել ինչպես բնակելի շենքերի համար:

8.1.7 Փազաբալունային կայանքները պետք է ունենան չայրվող նյութերից կառուցված, 1.6 մետրից ոչ պակաս բարձրությամբ, քամահարվող ցանկապատ: Փազամբարների հեռավորությունը մինչև ցանկապատ հարկավոր է ընդունել ոչ պակաս 1 մ, ընդ որում, ցանկապատից մինչև պարփակ թմբապատման եզրը կամ չայրվող նյութերից պատրաստված ցանկապատի հեռավորությունը (գազամբարների վերգետնյա տեղադրման դեպքում) հարկավոր է ընդունել ոչ պակաս 0.7 մ:

8.1.8 Գոլորշիացման կայանքները հարկավոր է տեղակայել բաց հարթակների վրա կամ այնպիսի առանձին շենքերում, սենքերում (կցակառուցված կամ ներկառուցված արտադրական շենքերին), որոնց հատակի մակարդակը բարձր է հողի հատակագծային միջից, հեռավորությունը գազամբարային կայանքից ոչ պակաս 10 մ և հեռավորությունը շենքերից, կառուցվածքներից ու հաղորդակցուղիներից ոչ պակաս 7 աղյուսակում նշված չափերից:

Աղյուսակ 7

	Շենքեր, կառուցվածքներ և հաղորդակցուղիներ	Հեռավորությունը գազամբարներից լուսանցով, մ						Հեռավորությունը գոլորշիացման կամ խմբային բալունային կայանքից լուսանցով, մ
		Վերգետնյա			Ստորգետնյա			
		Կայանքի գազամբարների ընդհանուր տարողության դեպքում, խմ						
		Մինչև 5	բարձր 5 մինչև 10	բարձր 10 մինչև 20	Մինչև 10	բարձր 10 մինչև 20	բարձր 20 մինչև 50	
1.	Հասարակական շենքեր և կառուցվածքներ	40	50	60	15	20	30	25
2.	Բնակելի տներ	20	30	40	10	15	20	12
3.	Մանկական և սպորտային հրապարակներ, ավտոտնակներ, (գազամբարային կայանքի ցանկապատից)	20	25	30	10	10	10	10
4.	Արտադրական շենքեր (արդյունաբերական, գյուղատնտեսական կազմակերպությունների) և արտադրական բնույթի կենցաղային սպասարկման կազմակերպություններ	15	20	25	8	10	15	12
5.	Կոյուղի, ջերմացանց (ստորգետնյա)	3.5	3.5	3.5	3.5	3.5	3.5	3.5
6.	Վերգետնյա կառուցվածքներ և հաղորդակցուղիներ (էստակադա, ջերմագիծ) գազամբարներին չվերաբերող	5	5	5	5	5	5	5
7.	Ջրատար և այլ անկանալային հաղորդակցուղիներ	2	2	2	2	2	2	2
8.	Ստորգետնյա հաղորդակցուղիների դիտահորեր	5	5	5	5	5	5	5
9.	Ընդհանուր ցանցի երկաթուղիներ (մինչև լիքի ստորոտը կամ գազամբարի կողմից փորվածքի եզրերը)	25	30	40	20	25	30	20
10.	Արդյունաբերական կազմակերպությունների մերձատար երկաթուղիներ, տրամվայի ուղիներ (մինչև ուղու առանցքը), I-III կարգի ավտոմոբիլային ճանապարհներ (մինչև երթևեկելի մասի եզրը)	20	20	20	10	10	10	10
11.	IV կարգի ավտոմոբիլային ճանապարհներ (մինչև երթևեկելի մասի եզրը)	10	10	10	5	5	5	5
12.	էՀԳ, ՏԵ, ԲԵ	Համաձայն էլեկտրակայանքների սարքվածքի կանոնների (ԷՍԿ)						

Մինչև 100 խմ/ժ (200 կգ/ժ) արտադրողականություն ունեցող գոլորշիացման կայանքները թույլատրվում է տեղադրել անմիջապես գազամբարների բլանցքների կափարիչների վրա, վերգետնյա կամ ստորգետնյա գազամբարներից ոչ պակաս 1 մ հեռավորության վրա, ինչպես նաև անմիջապես սպառող ազդեցատների մոտ, եթե դրանք տեղադրված են առանձին սենքերում կամ բաց հարթակների վրա:

Գոլորշացուցիչների խմբային տեղակայման դեպքում նրանց միջև հեռավորությունը հարկավոր է ընդունել ոչ պակաս 1 մ:

8.2 ԽՄԱՐԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՈՒՆԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

8.2.1 Բնակելի, վարչական, հասարակական, արտադրական և կենցաղային շենքերի համար որպես զագամատակարարման աղբյուր ծառայող ՀԱԳ բալունային կայանքները բաժանվում են՝

- ա) խմբային, որոնց կազմում մտնում են երկուսից ավել բալուններ.
- բ) անհատական, որոնց կազմում մտնում են երկուսից ոչ ավել բալուններ:

8.2.2 Խմբային բալունային կայանքի կազմում հարկավոր է նախատեսել՝ բալուններ ՀԱԳ համար, փակիչ արմատուր, գազի ճնշման կարգավորիչ, ԱԱԿ, ցույց տվող մոնիտոր և բարձր ու ցածր ճնշման խողովակաշարեր: Բալունների քանակը խմբային կայանքում հարկավոր է որոշել հաշվարկով:

8.2.3 Խմբային բալունային կայանքի առավելագույն ընդհանուր տարողությունը հարկավոր է ընդունել ըստ 8 աղյուսակի:

Աղյուսակ 8

Խմբային բալունային կայանքի նշանակությունը	Խմբային բալունային կայանքի բոլոր բալունների տարողությունը 1 (խմ)	
	շենքի պատի մոտ տեղադրման դեպքում	շենքից հեռավորության վրա
Բնակելի, վարչական, հասարակական և կենցաղային շենքերի զագամատակարարում	600 (0.6)	1000 (1)
Կենցաղային սպասարկման արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպություններ	1000 (1)	1500 (1.5)

8.2.4 Խմբային բալունային կայանքների տեղակայումը հարկավոր է նախատեսել շենքերից ու կառուցվածքներից 7 աղյուսակում նշված հեռավորությունների վրա, կամ գազիֆիկացվող CO դասի ոչ պակաս III աստիճանի հրակայունության շենքերի պատերի մոտ լուսամուտների ու դռների որմնախորշերից ոչ պակաս 7 աղյուսակում նշված հեռավորությունների վրա:

Հասարակական կամ արտադրական շենքի մոտ չի թույլատրվում մեկից ավել խմբային կայանքի նախատեսում: Բնակելի տան մոտ թույլատրվում է երեքից ոչ ավել բալունային կայանք՝ մեկը մյուսից 15 մ ոչ պակաս հեռավորության վրա:

8.2.5 Անհատական բալունային կայանքները հարկավոր է նախատեսել ինչպես շենքերի արտաքինից այնպես էլ շենքերի ներսում: Թույլատրվում է բալունների տեղադրումը երկուսից ոչ ավել հարկեր ունեցող բնակելի շենքերի բնակարաններում (մեկից ոչ ավել բալուն բնակարանում):

Արտաքինից տեղադրվող բալունային կայանքները հարկավոր է նախատեսել առաջին հարկի լուսամուտների բացվածքներից ոչ պակաս 0.5 մ և դռների բացվածքներից 1 մ լուսանցային հեռավորության վրա, իսկ ցոկոլային և նկուղային հարկերի դռների ու լուսամուտների բացվածքներից, ինչպես նաև կոյուղու դիտահորերից ոչ պակաս 3 մ լուսանցային հեռավորության վրա:

8.2.6 ՀԱԳ բալունը հարկավոր է տեղադրել զագամակից ոչ պակաս 0.5 մ և ջեռուցման սարքերից 1 մ հեռավորության վրա: Բալունի և ջեռուցման սարքի միջև է կրանի տեղադրման դեպքում հեռավորությունը թույլատրվում է փոքրացնել մինչև 0.5 մ: Էկրանը պետք է պատրաստված լինի չայրվող նյութից և ապահովի բալունի պաշտպանությունը ջեռուցման սարքի ջերմային ազդեցությունից: ՀԱԳ բալունը սենքից դուրս տեղադրման դեպքում հարկավոր է պաշտպանել տրանսպորտի վնասումներից և 45°C բարձր տաքացումից:

8.2.7 ՀԱԳ բալունների տեղադրումը չի թույլատրվում.

- ա) բնակելի սենյակներում և միջանցքներում,
- բ) գետնահատակային և նկուղային հարկերում և տանիքներում,
- գ) հասարակական սննդի օբյեկտների ճաշարահների, լսարանների ու դասասենյակների, շենքերի հանդիսարանների, հիվանդասենյակների և այլ մնան սենքերի վերևում և հատակի տակ,
- դ) բնական լույսից զուրկ սենքերում,
- ե) վթարային ելքերի մոտ,
- զ) շենքերի զվիսավոր ճակատների կողմից:

9. ՀՆԴՈՒԿԱՑՎԱԾ ԱԾԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ զԱՋԵՐԻ զԱԶԱՆՑՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ (ԿԵՏԵՐ/ԳԼԿ)

9.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

9.1.1 Հեղուկացված ածխաջրածնային գազերը (ՀԱԳ) ընդունելու, պահեստավորելու և սպառողներին ավտոցիստեռներով ու կենցաղային բալուններով առաքելու, բալունները նորոգելու ու վերազննելու համար նախատեսվող զագալցման կայանքները (ԳԼԿ) հարկավոր է տեղադրել բնակավայրերի բնակվելու տարածքներից դուրս, բնակելի շրջանների նկատմամբ գերակշռող քամիների ուղղության հակառակ կողմում:

Աղյուսակ 9

h/h ը/կ	Շենքեր, սենքեր և հաղորդակցողիներ	Լուսանցային հեռավորությունը ՀԱԳ զագամբարներից, մ								Հեռավորությունը ՀԱԳ օգտագործող սենքերից, կայանքներից, մ	Հեռավորությունը լիցքավորված բալունների պահեստից ընդհանուր տարողությամբ, խմ		
		Վերգետնյա զագամբարներ				Ստորգետնյա զագամբարներ							
		Ընդհանուր տարողության դեպքում, խմ											
		բարձր 20 մինչև 50	բարձր 50 մինչև 200	բարձր 50 մինչև 500	բարձր 200 մինչև 8000	բարձր 50 մինչև 200	բարձր 50 մինչև 500	բարձր 200 մինչև 8000					
		Մեկ զագամբար, առավելագույն տարողությունը, խմ											
		պակաս 25	25	50	100	մեծ 100 մինչև 600	25	50	100	մեծ 100 մինչև 600	մինչև 20	բարձր 20	
1.	Բնակելի, հասարակական, վարչական, կենցաղային, արտադրական շենքեր, ավտոտնակներ և բաց կանգառներ*	70 /30/	80 /50/	150 /100/**	200	300	40 /25/	75 /55/**	100	150	50 (20)	100 (30)	
2.	Վերգետնյա կառուցվածքներ և հաղորդակցողիներ (էստակադներ, ջերմատարներ և այլն) բնակելի շենքերի օժանդակ կառույցներ	30 /15/	30 /20/	40 /30/	40 /30/	40 /30/	20 /15/	25 /15/	25 /15/	25 /15/	30	20 /15/	20 /20/
3.	Ստորգետնյա հաղորդակցողիներ(բացի ԳԼԿ տարածքի զագատարները)	Ցանկապատի սահմաններից դուրս, ըստ համապատասխան գործող շինարարական նորմերի											
4.	Էլեկտրահաղորդման գծեր, տրանսֆորմատորային ենթակայաններ, բաժանարար սարքեր	Ըստ է Ս Կ կանոնների											
5.	Ընդհանուր ցանցի երկաթուղիներ (լիքի ստորոտից), I-III կարգի ավտոմոբիլային ճանապարհներ	50	75	100***	100	100	50	75***	75	75	50	50	50
6.	Մերձատար երկաթուղիներ, կազմակերպությունների ճանապարհներ, տրամվայի ուղիներ I կարգի ավտոմոբիլային ճանապարհներ	30 /20/	30*** /20/	40*** /30/	40 /30/	40 /30/	20*** /15/**	25*** /15/**	25 /15/	25 /15/	30	20 /20/	20 /20/

* <եավորությունը բնակելի և հարակալան շենքերից հարկավոր է ընդունել ինքնուրույն հարթակի վրա տեղադրված ՀԱԳ և այլ օբյեկտների համար՝ նշվածից ոչ պակաս, իսկ վարչական, կենցաղային, արտադրական շենքերից, կաթայատներից, ավտոտնակներից - ըստ փակագծերում բերված տվյալների, բայց ոչ պակաս համապատասխան շենքերի ու կառուցվածքների համար 10 աղյուսակում նշվածներից:
** Թույլատրվում է մինչև 200 խմ ընդհանուր տարողությամբ ՉԼԿ գազամբարից հեռավորությունը կրճատել մինչև 70 մ՝ վերգետնյա կատարման դեպքում, ստորգետնյա՝ մինչև 35 մ, իսկ մինչև 300 խմ տարողության դեպքում - համապատասխանաբար 90 և 45 մ:
*** Թույլատրվում է երկաթգծերից և ավտոմոբիլային ճանապարհներից (տող 5) հեռավորությունը մինչև 200 խմ ընդհանուր տարողությամբ, վերգետնյա ՀԱԳ գազամբարները կրճատել մինչև 75 մ, ստորգետնյա գազամբարները՝ մինչև 50 մ: <եավորությունը կազմակերպության տարածքից դուրս անցնող մեծածախ, տրանսպորտ ուղիներից և այլն (տող 6) մինչև ոչ ավել 100 խմ ընդհանուր տարողությամբ ՀԱԳ գազամբարները թույլատրվում է կրճատել՝ վերգետնյա կատարման դեպքում մինչև 20 մ և ստորգետնյա կատարման՝ մինչև 15 մ, իսկ ուղիների և ճանապարհների կազմակերպությունների տարածքներով անցման դեպքում (կետ 6) այդ հեռավորությունները կրճատվում են մինչև 10 մ գազամբարների ստորգետնյա կատարման դեպքում:
1. Փակագծերում նշված հեռավորությունները տրված են արդյունաբերական կազմակերպությունների տարածքում տեղադրված ՀԱԳ գազամբարների և լիցքավորված բալոնների պահեստների համար:
2. Լիցքավորված բալոնների պահեստից մինչև արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպությունների շենքերը, ինչպես նաև արտադրական բնույթի կենցաղային սպասարկման կազմակերպությունները հարկավոր է ընդունել ըստ փակագծերում բերված տվյալների:
3. Յուրաքանչյուր 50 խմ միավոր տարողությամբ երկու գազամբարների տեղադրման դեպքում հեռավորությունը մինչև ՉԼԿ չվերաբերող շենքերը (բնակելի, հասարակական, արտադրական և այլն) թույլատրվում է կրճատել՝ վերգետնյա գազամբարների համար մինչև 100 մ, ստորգետնյաների համար՝ մինչև 50 մ:
4. <եավորությունը գազամբարներից մինչև այն տեղերը, որտեղ միաժամանակ կարող են 800 մարդուց ավել գտնվել (մարզադաշտեր, շուկաներ, զբոսայգիներ, բնակելի տներ և այլն), ինչպես նաև մինչև դպրոցական և նախարարոցական, սանատոր-բուժման կազմակերպությունները հարկավոր է ավելացնել 2 անգամ:
5. ՉԼԿ վառելիքայինցավորման կետից նվազագույն հեռավորությունը անհրաժեշտ է ընդունել ըստ հիդրոտեխնիկական կանոնների:

Աղյուսակ 10

</> ը/կ	Շենքեր և կառուցվածքներ	Հեռավորությունը ՉԼԿ շենքերի և կառուցվածքի միջև, մ											
		1 սյունակում բերված շենքերի և կառուցվածքների հերթական համարները											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Վերգետնյա գազամբարներ և երկաթուղային դատարկման էստակադներ	Աղ.12 Կ.9.3.3	10	15	30	40	15	30	40	10	10	40	40
2.	Ստորգետնյա գազամբարներ	10	Կ.9.3.1	10	20	30	10	20	20	5	5	40	30
3.	Ա կարգի սենյեր և բալոնների բեռնմաքերնաթափման հարթակներ	15	10	10	15	40	15	30	40	10	10	40	40
4.	ՀԱԳ լցասյունակներ ավտոմոբիլային տեղերի համար և լցավորման աշտարակներ	30	20	15	7	30	15	15	30	10	10	15	30
5.	ՀԱԳ չօգտագործող կաթաստուրն, նորոգման արհեստանոց, ավտոմոբիլների տեղապասարկման շենքեր, ավտոտնակներ	40	30	40	30	•	Աղ.9	•	•	•	•	•	•
6.	Բալոնների ռեկալից պահեստ	15	10	15	15	Աղ.9	--	Աղ.9	40	5	•	40	Աղ.9
7.	Բաց կրակ չօգտագործող (այդ թվում նաև Ա կարգի), առանց նկուղային մասի օժանդակ շենքեր և կառուցվածքներ	30	20	30	15	•	Աղ.9	--	•	•	•	••	•
8.	Նկուղային մատվ օժանդակ շենքեր (ավտոկշեռք, ջրամատակարարման պոմպակայան և այլն)	40	30	40	30	•	40	•	--	•	•	••	•
9.	Ավտոճանապարհներ, բացի տեղական մեծատարողիներից (մինչև երթուղի մասի եզրը)	10	5	10	10	•	5	•	•	--	1.5	•	--
10.	Տարածքի ցանկապատը	10	5	10	10	•	•	•	•	1.5	--	•	10
11.	Հրդեհաշիջման ջրամբարներ (մինչև ջրագծերի դիտահորերը)	40	40	40	15	••	40	••	••	•	•	--	••
12.	Ավտոմեքենաների բաց կանգառ (բենզին, ՀԱԳ)	40	30	40	30	•	Աղ.9	•	•	--	10	••	--

«--» նշանը նշանակում է, որ հեռավորությունը չի նորմավորվում,
«••» նշանը նշանակում է, որ հեռավորությունը ընդունվում է ըստ ՀՀՇՆ III-9.02.02,
«•» նշանը նշանակում է, որ հեռավորությունը ընդունվում է ըստ ՄՆԻՊ 2.04.02:
Հեռավորությունը անմիջապես արտադրական անպայթյունավտանգ սենյերում տեղադրված էլեկտրաբաժանարար սարքերից հարկավոր է որոշել սույն աղյուսակի 7-րդ ստորդ:

Ավտոմոբիլների գազացման կայանները (կետերը (ԱԳԿ)) տեղադրվում են համաձայն հեղուկացված ածխաջրածնային գազերի ՉԼԿ ներկայացվող պահանջների, բացառելով 9.1.3 կետի պահանջը:
9.1.2 ՉԼԿ շինարարության հարթակի ընտրությունը անհրաժեշտ է նախատեսել հաշվի առնելով մինչև դրան շրջապատող շենքերի և կառուցվածքների հեռավորությունները, ինչպես նաև այդ տարածաշրջանում երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների առկայությունը:
9.1.3 ՉԼԿ կառուցման հարթակը հարկավոր է նախատեսել հաշվի առնելով ցանկապատի արտաքինից 10 մ լայնությամբ հակահրդեհային գոտու ապահովումը և մինչև անտառային զանգվածները եղած նվազագույն հեռավորությունները՝ փշատերև ծառերի համար 50 մ, սաղարթավորի համար՝ 20 մ, խառիչ դեպքում՝ 30 մ:
9.1.4 ՉԼԿ տարածքում եղած շենքերում բնակելի սենյեր չի թույլատրվում նախատեսել: Գազային տնտեսության շահագործող ծառայությունների տեղակայումը թույլատրվում է նախատեսել ՉԼԿ կից օժանդակ գոտու կողմից:

9.2 ՉԼԿ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՐԱԿԱՅՈՒՄԸ

9.2.1 ՀԱԳ պահեստավորման գազամբարներից և ՉԼԿ տարածքում տեղակայվող ՀԱԳ օգտագործող կայանների սենյերից մինչև ՉԼԿ չվերաբերող շենքերը ու կառուցվածքները եղած նվազագույն հեռավորությունները հարկավոր է ընդունել ըստ 9 աղյուսակի: Վերգետնյա մինչև 20 խմ և ստորգետնյա մինչև 50 խմ տարողությամբ գազամբարների հեռավորությունները ընդունվում են ըստ 7 աղյուսակի:
ՉԼԿ տարածքում կան արդյունաբերական կազմակերպությունների տարածքում, որտեղ տեղակայված է ՉԼԿ, շենքերի և կառուցվածքների նվազագույն հեռավորությունը ՀԱԳ գազամբարներից հարկավոր է ընդունել ըստ 10 աղյուսակի:

Նվազագույն հեռավորությունը բալոնների (հեղուկացված գազի) պահեստից և բեռնման-բեռնաթափման հարթակներից մինչև տարբեր նշանակության շենքերն ու կառուցվածքները հարկավոր է ընդունել ըստ 9 և 10 աղյուսակների: Ընդ որում, 9 աղյուսակի 1 տողում բերված հեռավորությունները՝ բալոնների պահեստից մինչև այգեգործական և ամառանոցային ավանների շենքերն ու կառուցվածքները թույլատրվում է փոքրացնել ոչ ավել քան 2 անգամ, պայմանով, որ պահեստում տեղադրվի 50 լիտրանոց 150 բալոններ (7.5 խմ): Արդյունաբերական կազմակերպությունների տարածքներում հեղուկացված գազի բալոնների պահեստների տեղակայումը հարկավոր է նախատեսել համապատասխան ՀՀՇՆ III-9.02.02 պահանջների:

9.2.2 ՀԱԳ օբյեկտների վերակառուցումը առանց գազամբարների ընդհանուր տարողության մեծացման գոյություն ունեցող կառուցապատման մեջ թույլատրվում է կատարել պահպանելով փաստացի հեռավորությունները: Հիմնավորված դեպքերում գազամբարների ընդհանուր տարողության մեծացման ժամանակ, պահանջվում է անվտանգ շահագործման միջոցառումների մշակում:

9.3 ԳԱԶԱՄԲԱՐՆԵՐ ՀԱԳ ՀԱՍԱՐ

9.3.1 Հեղուկացված գազերի համար գործարանային պատրաստվածության գազամբարները գազայցման կայաններում կարող են տեղադրվել վերգետնյա և ստորգետնյա:

ԱԳԼԿ գազամբարները տեղադրվում են ստորգետնյա՝ յուրաքանչյուրը 25 խմ տարողությամբ, բայց ոչ ավել 100 խմ ընդհանուր ծավալում: Տեխնիկատնտեսական հիմնավորման դեպքում թույլատրվում է գազամբարները տեղադրել վերգետնյա՝ յուրաքանչյուրը 5 խմ տարողությամբ, բայց ոչ ավել 50 խմ ընդհանուր ծավալով:

Ստորգետնյա առանձին գազամբարների միջև լուսանցային հեռավորությունները պետք է հավասար լինեն կից մեծ գազամբարի տրամագծի կեսին, բայց ոչ պակաս 1 մ:

9.3.2 Վերգետնյա գազամբարները հարկավոր է դասավորել խմբերով, ԳԼԿ հարթակի ցածր հատակագծային նիշերի շրջանում: Վերգետնյա գազամբարների առավելագույն ընդհանուր տարողությունը խմբում հարկավոր է ընդունել համապատասխան 11 աղյուսակի:

Աղյուսակ 11

ԳԼԿ գազամբարների ընդհանուր ծավալը, խմ	Գազամբարների ընդհանուր ծավալը խմբում, խմ
Մինչև 2000	1000
Մեծ 2000 մինչև 8000	2000

խմբերի միջև նվազագույն լուսանցային հեռավորությունը հարկավոր է ընդունել ըստ 12 աղյուսակի:

Աղյուսակ 12

Գազամբարների ընդհանուր տարողությունը խմբում, խմ	Լուսանցային հեռավորությունը վերգետնյա տեղադրված խմբերի եզրային գազամբարների արտաքին ծնորդների միջև, մ
Մինչև 200	5
Մեծ 200 մինչև 700	10
Մեծ 700 մինչև 2000	20

9.3.3 Վերգետնյա գազամբարների ներխմբային լուսանցային հեռավորությունները պետք է լինեն կից տեղադրված գազամբարներից ամենամեծի տրամագծից ոչ պակաս:

Վերգետնյա երկշարք և ավելի շարքերով տեղադրված գազամբարների միջև հեռավորությունը հարկավոր է ընդունել ամենամեծ գազամբարի երկարությունը հավասար, սակայն ոչ պակաս 10 մ:

9.3.4 Վերգետնյա գազամբարների յուրաքանչյուր խմբի համար ամբողջ պարագծով պետք է նախատեսվի պարփակված թմբապատում կամ ոչ պակաս 1 մ բարձրությամբ, չայրվող նյութերից պատրաստված գազամթափանց ցանկապատ, հաշվարկված խմբի գազամբարների տարողության 85% համար:

Հողաթմբի վերնամասի լայնությունը պետք է լինի ոչ պակաս 0.5 մ: Հեռավորությունը գազատարներից մինչև թմբապատի ստորոտը կամ ցանկապատը պետք է հավասար լինի մոտակա գազամբարի տրամագծի կեսին, բայց ոչ պակաս 1 մ: Թմբապատումը (ցանկապատը) պետք է հաշվարկվի ըստ ամրության, ելնելով թմբապատման (ցանկապատի) ներքին տարածությունը ջրով լիքը լցնելու պայմանից: Ջրի հետացումը պահման բազայի թմբապատված տարածքից հարկավոր է նախատեսել բազայի տարածքի հատակագծման հաշվին, հիդրոփական ունեցող անձրևաընդունիչով: Կիրառվող ցանկապատի լայնությունը ընդունվում է կախված նյութից:

Գազամբարային հավաքակայանի տարածք մտնելու համար թմբապատման կամ ցանկապատի երկու կողմերից պետք է նախատեսել 0.7 մ լայնությամբ անցում - աստիճաններ, ոչ պակաս երկուսից յուրաքանչյուր խմբի համար, դասավորված թմբապատման (ցանկապատի) հակառակ կողմերից:

9.4 ՀԱԳ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

9.4.1 ԳԼԿ խողովակաշարերով ՀԱԳ հեղուկ և գոլորշային ֆազերի տեղափոխման համար հարկավոր է նախատեսել պոմպեր, ճնշակներ կամ գոլորշիացման (ջերմափոխանակիչ) կայանքներ:

ՀԱԳ լցման և դատարկման համար թույլատրվում է օգտագործել բնական գազի էներգիան, որոնց հագեցած գոլորշիների ճնշումը 45°C ջերմաստիճանի դեպքում չի գերազանցում 1.2 ՄՊա:

9.4.2 Ճնշակները հարկավոր է տեղակայել ջեռուցվող սենքերում: Պոմպերի և ճնշակների տեղակայման սենքի հատակը պետք է 0.15 մ բարձր լինի մերձակա տարածքի հատակագծային նիշերից: Օդային սառեցմամբ ճնշակները թույլատրվում է տեղադրել ծածկարանի տակ բաց հարթակների վրա:

9.4.3 Պոմպերը և ճնշակները հարկավոր է տեղադրել առանձին հիմքերի վրա, այնպես որ կապ չունենան այլ սարքավորումների հիմքերի և շենքի պատերի հետ: Մեկ շարքով երկու և ավել պոմպերի կամ ճնշակների տեղակայման դեպքում անհրաժեշտ է նախատեսել (լուսանցային) ոչ պակաս (մ).

- ա) սպասարկման ճակատով անցման լայնությունը 1.5
- բ) պոմպերի միջև հեռավորությունը..... 0.8
- գ) ճնշակների միջև հեռավորությունը 1.5
- դ) հեռավորությունը պոմպերի և ճնշակների միջև..... 1.0
- ե) հեռավորությունը պոմպերից և ճնշակներից մինչև սենքերի պատերը 1.0

9.4.4 Գերլցելու բալոններից գազի և չգոլորշիացած գազի դատարկման համար հարկավոր է նախատեսել գազամբարներ, դրանք տեղադրելով՝ ա) պահպանման բազայի տարածքում 10 խմ ավել գազամբարների ընդհանուր տարողության դեպքում,

բ) լցավորման արտադրամասի շենքից 3 մ ոչ պակաս հեռավորության վրա (չերթևեկելի տարածքի վրա), մինչև 10 խմ գազամբարների ընդհանուր տարողության դեպքում:

9.4.5 ՀԱԳ ավտոդիստենները լցավորելու համար հարկավոր է նախատեսել լցավորման աշտարակներ:

9.4.6 Ավտոդիստենների լցավորման աստիճանը հսկելու համար հարկավոր է նախատեսել ավտոլիշեռներ կամ ավտոդիստեններում և երկաթուղային ցիստեռներում գազի զանգվածի (լցավորման աստիճանի) որոշման սարքվածքներ:

Տաքացրած գազի օգտագործման դեպքում հարկավոր է հսկել նրա ջերմաստիճանը, որը չպետք է գերազանցի 45°C:

9.4.7 Դեպի լցավորման աշտարակները գնացող հեղուկ և գոլորշի ֆազերի խողովակաշարերի վրա, աշտարակներից 10 մ ոչ պակաս հեռավորության վրա հարկավոր է նախատեսել փակիչ սարքեր:

9.4.8 Սենքերում տեղադրվող գոլորշիացման կայանքները, հարկավոր է տեղակայել լցավորման արտադրամասի շենքում կամ այն շենքի առանձին սենքում, որտեղ կան գազօգտագործող կայանքներ, կամ Ա կարգի շենքերի համար սահմանված պահանջները բավարարող առանձին շենքերում:

9.4.9 ԳԼԿ արտադրական գոտում չի թույլատրվում նախատեսել բաց կրակի կիրառմամբ գոլորշիացման կայանքներ:

9.4.10 ԳԼԿ ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման, ջեռուցման և օդափոխման, հրդեհաշիջման համակարգերի նախագծման

դեպքում հարկավոր է առաջնորդվել համապատասխան շինարարական նորմերի, էլեկտրակայանքների սարքվածքի կանոնների (ԷՍԿ) և սույն բաժնի պահանջներով:

9.4.11 Ա կարգի հրդեհապայթյունային վտանգավորության շենքերից 50 մ շառավղով գոտում տեղավորված ջրամատակարարման և կոյուղու դիտահորերի վրա անհրաժեշտ է նախատեսել երկու (իրար վրա տեղադրված) կախարիչ: Կախարիչների միջի տարածությունը պետք է խտացվի գազի հոսակորստի դեպքում ներթափանցումը դիտահոր բացառող նյութով:

9.4.12 ՊԼԿ հարկավոր է նախատեսել ջրի հակահրդեհային պաշարի ջրամբարով, պոմպակայանով, հրդեհային հիդրանտ ունեցող բարձր ճնշման օղակային ջրատարով արտաքին հրդեհաշիջման համակարգ:

Պահպանման բազայում 200 խմ և պակաս ընդհանուր տարողությամբ գազամբարների դեպքում հրդեհաշիջման համար հարկավոր է նախատեսել ցածր ճնշման ջրատարի համակարգ կամ հրդեհաշիջում ջրավազաններից:

9.4.13 ՊԼԿ արտաքին հրդեհաշիջման ջրի ծախսը հարկավոր է ընդունել ըստ 13 աղյուսակի:

Աղյուսակ 13

Հեղուկացված գազերի գազամբարների ընդհանուր տարողությունը պահպանման բազայում, խմ	Ջրի ծախսերը, լ/վ ջրամբարներով	
	վերգետնյա	ստորգետնյա
Մինչև 200 ներառյալ	15	15
Մինչև 1000 ներառյալ	20	15
Մինչև 2000 ներառյալ	40	20
Բարձր 2000, բայց ոչ ավել 8000	80	40

9.4.14 ՊԼԿ վերգետնյա ջրամբարներով հակահրդեհային պոմպակայանները ըստ էլեկտրամատակարարման հուսալիության հարկավոր է դասել I կարգի:

ՊԼԿ մեկ աղբյուրից էլեկտրամատակարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել դիզելային շարժաբեռամբ պահուստային հակահրդեհային պոմպերի տեղակայում:

9.4.15 Գազամբարների ավելի քան 200 խմ ընդհանուր տարողությամբ ՀԱԳ պահպանման վերգետնյա գազամբարներով գազացման կայանքներում հարկավոր է նախատեսել գազամբարների ջրային սառեցման մշտական համակարգ, որը 75 րոպեի ընթացքում պետք է ապահովի գազամբարների ռոռզման ինտենսիվությունը՝

- ա) 0.1 լ/վրկ մ² - կողային և ճակատային մակերեսների համար,
- բ) 0.5 լ/վրկ մ² - արմատուր ունեցող ճակատային մակերեսների համար:

Գազամբարների ջրային սառեցման (ռոռզման) կայանքները պետք է սարքավորված լինեն հրդեհային շարժական տեխնիկայի միացման սարքավորանքներով:

Ջրի ծախսը հարկավոր է ընդունել մեկ շարքով դասավորված երեքից ոչ պակաս գազամբարների մեկ խմբում և մեկ խմբում երկշաք դասավորված վեց գազամբարների միաժամանակյա ռոռզման հաշվարկից՝ լրացուցիչ հաշվի առնելով 13 աղյուսակում բերվածը:

9.4.16 Դատարկման էստակադի հրդեհաշիջումը հարկավոր է ապահովել ՊԼԿ համար նախատեսված հակահրդեհային ջրամատակարարման համակարգից՝ շարժական միջոցներով:

9.4.17 Ա կարգի փակ սենքերի համար անհրաժեշտ է նախատեսել ներածման-արտածման օդափոխման արհեստական համակարգեր ըստ ՀՀՇՆ IV-12.02.01: Սենքերի վերին գոտիների հաշվարկային օդափոխանակության ապահովման համար թույլատրվում է բնական օդափոխում՝ դեֆլեկտորների տեղադրմամբ: Այդ սենքերում, ոչ աշխատանքային ժամերին, թույլատրվում է բնական կամ խառը օդափոխում: Չտաքացվող արտադրական սենքերում, որտեղ սպասարկող անձնակազմը գտնվում է պակաս քան 2ժ, թույլատրվում է բնական օդափոխություն արտաքին պատերի ներքևի մասերում տեղակայված շերտափեղկային ցամցերի միջոցով, որոնց չափերը որոշվում են հաշվարկով, ըստ ՀՀՇՆ IV-12.02.01:

9.4.18 Հեղուկացված գազերի առկայությամբ Ա կարգի արտադրական սենքերից արտածումը հարկավոր է նախատեսել սենքերի ներքևի և վերին գոտիներից: Ընդ որում, ներքևի գոտուց անհրաժեշտ է վերցնել հեռացվող օդի նորմավորվող ծախսի ոչ պակաս 2/3, հաշվի առնելով տեղական արտածմամբ հեռացող օդաքանակը: Ընդհանուր փոխանակման արտածման օդափոխման համակարգերի բացվածքները հարկավոր է նախատեսել հատակից 0.3 մ մակարդակի վրա:

9.4.19 Ա կարգի արտադրական սենքերում տեղադրվող պոմպերի, ճնշակների և այլ սարքավորումների էլեկտրաշարժաբեռները հարկավոր է բլոկավորել արտածման օդափոխության համակարգերի օդամուղների հետ այնպես, որ դրանք չկարողանան աշխատել օդափոխման անջատման դեպքում:

9.4.20 Սենքերում և արտաքին կայանքների մոտ պայթյունավտանգ գոտու դասը, որին համապատասխան պետք է կատարվի ՊԼԿ, ԱՊԼԿ համար էլեկտրասարքավորման ընտրությունը, հարկավոր է ընդունել էլեկտրակայանքների սարքվածքի կանոններին (ԷՍԿ) համապատասխան:

9.4.21 էլեկտրամատակարարման հուսալիության ապահովման տեսակետից շենքերի և կառուցվածքների էլեկտրաընդունիչները, որոնց վրա տարածվում են սույն բաժնի նորմերը, հարկավոր է դասել III կարգի, բացառությամբ հակահրդեհային պոմպակայանների վթարային օդափոխման և մինչ՝ պայթյունավտանգ խտության ազդարարիչների, էլեկտրաընդունիչների, որոնք հարկավոր է դասել I կարգին: Հրդեհային պոմպերի էլեկտրամատակարարումը երկու անկախ աղբյուրներից հնարավոր չլինելու դեպքում թույլատրվում է նախատեսել դրանց միացումը ըստ ՄՆԻՊ 2.04.01 կամ նախատեսել դիզելային շարժաբեռով պահեստային պոմպի տեղակայում:

9.4.22 Պոմպաճնշակային լցավորման, գոլորշիացման և ներկման բաժնիների սենքերում աշխատանքային լուսավորումից բացի հարկավոր է նախատեսել լրացուցիչ անկախ վթարային լուսավորություն:

Թույլատրվում է կիրառել կուտակիչային պայթյունապայաշտպանված լայտերներ ոչ ավել 12 Վ լարմամբ:

9.4.23 Հրդեհի առաջացման դեպքում, պայթյունավտանգ գոտիներով սենքերի օդում գազի վտանգավոր խտության պարագայում էլեկտրամատակարարման սխեման պետք է նախատեսվի տեխնոլոգիական սարքավորման ավտոմատ անջատում և օդափոխման սարքավորումների կենտրոնացված անջատում ըստ ՀՀՇՆ IV-12.02.01:

9.4.24 ՊԼԿ տարածքում հարկավոր է նախատեսել արտաքին և պահպանական լուսավորություն ու ազդանշանում: Արտաքին և պահպանական լուսավորության կառավարումը հարկավոր է նախատեսել անձնակազմի մշտական ներկայության տեղերից (օրինակ՝ անցակետի սենքից):

9.4.25 ՊԼԿ տարածքի վրայով էլեկտրահաղորդման օդային գծերի անցկացում չի թույլատրվում:

9.4.26 Շենքերի, կառուցվածքների, արտաքին տեխնոլոգիական կայանքների ու հաղորդակցուղիների համար պայթյունավտանգ գոտիների դասից կախված հարկավոր է նախատեսել շանթապաշտպանություն:

Հավելված Ա

ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀՐՈՒՄՆԵՐ

ՀՀՇՆ II-8.04.01-97	Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն
ՀՀՇՆ III-9.02.02-03	Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր
ՀՀՇՆ IV-11.05.01-96	Երկաթուղիների 1520 մմ ռելսամիջի
ՀՀՇՆ IV-11.05.02-93	Ավտոմոբիլային ճանապարհներ
ՀՀՇՆ IV-12.02.01-2000	Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում
ՄՆԻՊ 2.01.07-85	Բեռնվածքներ և ազդեցություններ
ՄՆԻՊ 2.04.01-85	Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի
ՄՆԻՊ 2.04.09-84	Շենքերի և կառուցվածքների հրդեհային ավտոմատիկա
ՄՆԻՊ 2.07.01-89	Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում
ՄՆԻՊ 2.09.02-85	Արտադրական շենքեր
ՄՆԻՊ 3.04.03-85	Շինարարական կոնստրուկցիաների և կառուցվածքների պաշտպանությունը կոռոզիայից
ՄՆԻՊ 3.01.01-85	Շինարարական արտադրության կազմակերպում

ԷՍԿ	Էլեկտրակայանքների սարքվածքի կանոններ (հաստատված ՀՀ էներգետիկայի նախարարության 98 թ. հունիսի 24-ի N 189-ՊՄ հրամանով)
	Կարգ զազամատակարարման վերականգնման և գազաֆիկացման (հաստատված էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թ. նոյեմբերի 30-ի N 66 որոշմամբ) ժամանակավոր կարգ բազմաբնակարան շենքերի գազամատակարարման համակարգերի վերականգնման (վերակառուցման), հաստատված ՀՀ կառավարության 2002 թ. դեկտեմբերի 5-ի N 2024-Ն որոշմամբ)
ՀՍ ԻՍՕ 10380	Բնական գազի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոններ (հաստատված էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թ. մայիսի 29-ի N 24 որոշմամբ)
ՀՍ ԻՍՕ10806	Խողովակաշարեր. Մետաղական ծալքավոր ձկախողովակներ և ձկախողովակային միացումներ
	Խողովակաշարեր. Մետաղական ծալքավոր ձկախողովակների կցամասեր

(Հավելվածը լրաց. 30.11.05 N 224-Ն)

Հավելված Բ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

ԳԲԿ	գազաբաշխիչ կայան
ՀԱԳ	հեղուկացված ածխաջրային գազ
ԷՔՊ	էլեկտրաքիմիական պաշտպանություն
ԳՏԳ ՀԱՀ	գազաբաշխման տեխնոլոգիական գործընթացի հեռակառավարման ավտոմատացված համակարգ
ՆՏ	ներդիր տաքացուցիչ
ՀՉՍ	հսկիչ-չափիչ սարքեր
ԳԿԿ	գազակարգավորիչ կետ
ԳԼԿ	գազալցման կայան / կետ
ԱԳԼԿ	ավտոմոբիլային ԳԼԿ
ՊԳԿԿ	պահարանային գազակարգավորիչ կետ
ՍԴՈ	պոլիէթիլենային խողովակների արտաքին տրամագծի հարաբերությունը պատի հաստությանը
ԲՄՊ	բալունների միջանկյալ պահեստ
ԲԶՀ	բարձր ջրերի հորիզոն
ԲԳԿԿ	բլոկային գազակարգավորիչ կայան
ԳԿ	գազակարգավորիչ կայանք
ԱՓԿ	ապահովիչ-փական կափույր
ԱԱԿ	ապահովիչ-արտանետիչ կափույր
ԷՍԿ	էլեկտրակայանքների սարքվածքի կանոններ
ԳՕԿ	գազաօգտագործման կանոններ
ԷՀԳ	էլեկտրահաղորդագծեր
ՏԵ	տրանսֆորմատորային ենթակայաններ
ԲԵ	բաշխիչ ենթակայաններ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԿԻՐԱՈՄԱՆ ՈՒՈՐՏԸ
2. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ
3. ՏԵՐՄԻՆՆԵՐ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
4. ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ
5. ԱՐՏԱՔԻՆ ԳԱԶԱՏԱՐՆԵՐ
 - 5.1 Ընդհանուր դրույթներ
 - 5.2 Ստորգետնյա գազատարներ
 - 5.3 Վերգետնյա գազատարներ
 - 5.4 Ջրային արգելքների և հեղեղատների հատումը գազատարներով
 - 5.5. Երկաթուղիների, տրամվայի ուղիների և ավտոմոբիլային ճանապարհների հատումը գազատարներով
 - 5.6. Հատուկ բնական և կլիմայական պայմաններում գտնվող գազատարներին ներկայացվող լրացուցիչ պահանջներ
 - 5.7. Մաշված ստորգետնյա պողպատե խողովակների վերականգնումը
6. ԳԱԶԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԿԵՏԵՐ և ԿԱՅԱՆՔՆԵՐ
 - 6.1 Ընդհանուր դրույթներ
 - 6.2 ԳԿԿ և ԳԿԿԲ ներկայացվող պահանջներ
 - 6.3 ՊԳԿԿ ներկայացվող պահանջներ
 - 6.4 Գազակարգավորիչ կայանքներին (ԳԿ) ներկայացվող պահանջներ
 - 6.5 ԳԿԿ, ԲԳԿԿ, ՊԳԿԿ և ԳԿ սարքավորումները
7. ՆԵՐՔԻՆ ԳԱԶԱՏԱՐՆԵՐ
8. ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԱԾԽԱՋՐՎԾՆԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԳԱԶԱՍԲԱՐԱՅԻՆ ԵՎ ԲԱՈՒՆԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ
 - 8.1 Գազամբարային կայանքներ
 - 8.2 Խմբային և անհատական բալունային կայանքներ
 9. ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԱԾԽԱՋՐՎԾՆԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ (ԿԵՏԵՐ(ԳԼԿ))
 - 9.1 Ընդհանուր դրույթներ
 - 9.2 ԳԼԿ շենքերի և կառուցվածքների տեղակայումը
 - 9.3 Գազամբարներ ՀԱԳ համար
 - 9.4 ՀԱԳ օբյեկտների սարքավորումները